TRIPP-ը ոչ միայն տնտեսական, այլեւ աշխարհաքաղաքական նախագիծ է: Դրա վատ քողարկված, իրականում ընդհանրապես չքողարկված նպատակներից մեկը Ռուսաստանին ու Իրանին տարածաշրջանից մեկուսացնելն է: Շատ դժվար է պատկերացնել, որ այն որեւէ խմբագրման չի ենթարկվելու Իրանի հետ պատերազմում ԱՄՆ-ի կրած պարտությունից հետո:

Կարդացեք՝ էջ 4

Այս մարդն այդպիսին է ծնվել, այդպիսի գենետիկայով: Նա չի կարող համերաշխ մթնոլորտում ապրել, անդադար պետք է բախումներ հրահրի, պառակտի այս մի փոքր ազգին: Հայոց պատմության մեջ չի եղել նման ղեկավար, որ այս աստիճան ատի այլախոհությունը: Ցանկացած այլ կարծիք ունեցող մարդ այս մարդու համար անձնական թշնամի է:

Կարդացեք՝ էջ 6

Հայաստանի բոլոր դպրոցների 9-րդ դասարանի սովորողները հունիսի 24-ին «Գրականություն» եւ «Հայաստանի պատմություն» առարկաների ավարտական քննությունը հանձնեցին էսսեի ձեւաչափով՝ երկու առարկաների բովանդակությունն ինտեգրող գրավոր աշխատանքի միջոցով, որը նորամուծություն է եւ շատ գնահատվեց ժամանակին:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 104 (4239), 26 հունիս, ուրբաթ, 2026

www.hraparak.am

Ենք նախընտրական փուլում տեսանք, թե ինչպես ապաքաղաքական բանակն ու պաշտպանության համակարգը քաղաքականացվեցին՝ ՔՊ-ացվեցին, եւ ինչպես էր պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը դարձել ակտիվ քարոզիչ, բայց իր հայրենի Ստեփանավանում ՔՊ-ն ամենաքիչ ձայները ստացավ: Նախընտրական փուլում որպես քաղաքական գործիք օգտագործեցին վարժական հավաքների մահակը՝ 25-օրյա հավաքներին մասնակցությունը դարձնելով պատժամիջոց դրսից ժամանած ՀՀ քաղաքացիների կամ ընդդիմադիրների համար: Բանակը մի անգամ էլ օգտագործեցին մայիսի 28-ին՝ զորահանդես անելով եւ այն փիառ նպատակներով օգտագործելով: Բանակի մասնակցությունն էական եղավ նաեւ քվեարկության օրը, երբ զինվորներին սպաները շարքով տանում էին ընտրատեղամասեր, անգամ քվեարկության ժամի ավարտից հետո: Ընտրություններից հետո էլ բանակի հետ կապված գործընթացներ կան: Մասնավորապես, մեզ պատմեցին, որ զորամասերից մեկի քվեարկության արդյունքները չեն բավարարել իշխանություններին, եւ հիմա բանակի ղեկավարությունը հետաքննություն է անում, թե որ հրամանատարի տեղամասում են «վատ» արդյունքներ գրանցվել: Մեզ պատմեցին, որ ամենից եռանդով այս ուղղությամբ «աշխատում» էր երկրորդ կորպուսի հրամանատար, ծնունդով ջավախքցի գեներալ Գարեգին Պողոսյանը: Երեկ մի դեպքի մասին էլ տեղեկացանք՝ Ստեփանավանում ԲՀԿ անդամ կնոջ երկու զավակներին, որոնք կադրային զինվորականներ են, Պապիկյանը բանակից զորացրելու ապօրինի հրաման է ստորագրել:

Մեր տեղեկություններով, «Լուսավոր Հայաստան» կուսակցության փոխնախագահ Դավիթ Խաժակյանն առաջիկայում լքելու է կուսակցությունը: Կուսակցության մեր աղբյուրներից տեղեկացանք, որ տեւական ժամանակ է՝ նա սառեցրել է շփումները կուսակիցների հետ, պատճառը հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններին մասնակցել-չմասնակցելու հարցում կուսակցության ղեկավար կազմի հետ ունեցած տարաձայնություններն են: Մենք ավելի վաղ գրել էինք, որ Խաժակյանը կողմ չէր ԼՀԿ-ի միայնակ մասնակցությանը, ձայներ փոշիացնելուն, հենց այդ պատճառով էլ նա չընդգրկվեց նախընտրական ցուցակում, չմասնակցեց ընտրություններին, բայց որպեսզի ընտրություններից առաջ չդավաճաներ կուսակցությանը, մնաց մինչեւ ընտրությունների ավարտը: Նա ներքին քննարկումների ժամանակ ասել էր, որ ընտրություններից հետո կհեռանա կուսակցությունից:

Տարբերություն չկա

Մի պահ պատկերացրեք՝ ինչ կարող էր լինել, եթե, Աստված մի արասցե, Ադրբեջանը գրավեր Հայաստանը, եւ Ալիեւը դառնար Հայաստանի դեֆակտո ղեկավարը: Առաջին հերթին կոչնչացնեին Արցախի մասին հիշեցնող ամեն ինչ՝ կառույցները, դրոշը: Արցախի ներկայացուցչության շենքը նորից կդարձնեին ադրբեջանական թատրոն: Ատելություն ու թշնամանք կգեներացնեին արցախցիների նկատմամբ: Կփակեին Արցախի էջն ու կարգելեին օգտագործել «Արցախ» բառը, ծնունդով արցախցիների եւ արցախյան պատերազմների մասնակիցների նկատմամբ քրեական գործեր կհարուցեին ու կկալանավորեին: Հետո հայկական դպրոցներից կհանեին փառքի անկյունները, բոլոր պատերից կջնջեին արցախցի հերոսների նկարները, կապամոնտաժեին արցախյան ազատամարտերին նվիրված հուշարձանները: Հետո կսկսեին պայքարը հայոց եկեղեցու դեմ՝ եկեղեցիներ կփակեին, պատարագներ կարգելեին, կաթողիկոսին գահընկեց կանեին: Անպայման բոլոր սփյուռքահայերի մուտքը Հայաստան կփակվեր: Առաջինը կարգելվեր Հայ հեղափոխական դաշնակցությունը, ապա՝ այն բոլոր կուսակցությունները, որոնք հայկականություն են քարոզում, հայկական պետականության հզորացման, Հայաստանի սահմանների պաշտպանության, ինքնիշխանության մասին են խոսում, պայքարում: Հաջորդ քայլերով կփոխեին հայոց պատմության եւ հայ գրականության դասագրքերը, դպրոցներից կհանեին «Զինպատրաստություն» առարկան: Կվերացնեին հայկական բանակն ու պարտադիր զինծառայությունը: Անպայման բանտում կհայտնվեին Ադրբեջանի դեմ հաղթանակած բանակի գեներալներն ու այդ շրջանում մեր պետությունը ղեկավարած նախագահները: Ծանոթ ծրագիր է, չէ՞: Գրեթե այս բոլոր քայլերն այժմ իրականացնում է Հայաստանի գործող իշխանությունը: Այնպես որ, Հայաստանն ամբողջությամբ կգավթեն, թե հայկական իշխանության միջոցով կգործեն՝ տարբերությունը մեծ չէ:

Երեկ ՔՊ վարչությունը 3 թեկնածուից՝ Ալեն Սիմոնյան, Ռուբեն Ռուբինյան, Հայկ Կոնջորյան, ընտրեց ԱԺ նախագահացուին: Բայց ոչ պակաս թեժ մրցակցություն կա նաեւ ՔՊ խմբակցության ղեկավարի պաշտոնի համար: ՔՊ-ում դեռեւս վերջնական որոշում չկա, սակայն կուլիսներում տարբեր թեկնածություններ են քննարկվում: Ասում են՝ հավակնություններ ունեն շատերը. Ալխաս Ղազարյանից մինչեւ Վահագն Ալեքսանյան: Սակայն բոլորը գիտեն, որ անգամ եթե ձեւական քվեարկություն է կատարվում, որոշողը մեկ մարդ է՝ Նիկոլ Փաշինյանը: Կարծիք կա, որ Փաշինյանը, ինչպես 18-ից հետո, այս անգամ էլ ֆրակցիան կվստահի ԱՄՆ նախկին դեսպան Լիլիթ Մակունցին, որին վստահում է:

9 ԱՆԴԱՄ ԵՎ ՈՉ ՄԻ ԱՆԿԱԽ ԴԱՏԱՎՈՐ

ՍԴ-ն այսօր կմեկնարկի ընտրությունների արդյունքները վիճարկող 7 քաղաքական ուժերի դիմումների քննությունը: Գործերը միավորել են մեկ վարույթում, եւ դրանք քննվելու են դատարանի նույն նիստում: Դիմել են «Ուժեղ Հայաստանը» եւ «Հայաստան» դաշինքը, «Միասնության թեւերը», ԴՕԿ-ը, ԲՀԿ-ն, Արման Բաբաջանյանի եւ Հայկ Մարությանի կուսակցությունները: Նիստը կսկսվի ժամը 11:00-ին: Ղեկուցողը դատավոր Էդգար Շաթիրյանն է, քննությունն ընթանալու է բանավոր ընթացակարգով: ՍԴ-ի մասին օրենքի համաձայն՝ դատարանը կամ պետք է անփոփոխ թողնի ընտրությունների արդյունքների մասին ԿԸՀ որոշումը, կամ անվավեր ճանաչելով այն՝ 3 հնարավոր որոշում կայացնի. առաջին՝ «անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները», երկրորդ՝ «անվավեր ճանաչել եւ սահմանել մանդատների բաշխման կարգը», եւ երրորդ՝ «նշանակել ընտրությունների երկրորդ փուլ»: 9 հոգանոց ՍԴ կազմից 2 դատավոր՝ նախկին ՔՊ-ական Վլադիմիր Վարդանյանն ու Արամ Զավենիչի նախկին կուսակից Արտակ Զեյնալյանը, չեն մասնակցելու քննարկումներին: ՍԴ որոշումն ընդունելու համար անհրաժեշտ է 5 կողմ ձայն, հենց այս նպատակով էլ ՍԴ-ն չբավարարեց Սեդա Սաֆարյանի վերաբերյալ «Հայաստան» դաշինքի բացարկի դիմումը: Գործող ՍԴ-ն ոտից գլուխ նիկոլաիպատակ է, եւ այժմ պարզ է, թե ինչու էր Նիկոլ Փաշինյանը տիտանական ջանքեր գործադրում՝ ՍԴ-ն «զավթելու» համար: Այս կազմում մեկ մարդու միայն կարելի է գրագետ իրավաբան համարել՝ Երվանդ Խունդկարյանին, որին Փաշինյանը չի նշանակել: Հավանաբար, կասկածներ են ունեցել, որ 5 ձայն չեն ունենա, եւ իրենց ապահովագրելու համար Սաֆարյանին էլ պահեցին, թեեւ նա Արման Բաբաջանյանի կուսակցության ցուցակով նախորդ ընտրություններին էր մասնակցել, իսկ հայցվորներից մեկը Բաբաջանյանն է, ուստի կասկածի տակ է նրա անաչառությունը:

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՍՐԲԱԶԱՆՆ ՈՒ ԱՅՍ ԳՈՐԾՈՎ ԱՆՑՆՈՂ ԲՈԼՈՐ ԱՆՁԻՆՔ ՊԵՏՔ Է ԱՐԴԱՐԱՑՎԵՆ

Մեկ տարի առաջ՝ հունիսի 25-ին, Քննչական կոմիտեն վաղ առավոտյան հայտարարություն տարածեց, թե «Սրբազան պայքար» շարժման մասնակիցները եւ ղեկավարները «պլանավորել էին Հայաստանում իրականացնել ահաբեկչական եւ իշխանությունը զավթելուն ուղղված գործողություններ»: Հայտարարության մեջ նշվում էր, թե իբրեւ Բագրատ սրբազանը 2024-ի նոյեմբերից սկսած նպատակադրվել է իշխանությունը վերցնել Սահմանադրությամբ չթույլատրված եղանակով, եւ դրա համար «Գալստանյանը շարժման մի շարք մասնակիցների հետ նախնական համաձայնությամբ խմբի կազմում ձեռք է բերել ահաբեկչություն կատարելու եւ իշխանությունը զավթելու համար անհրաժեշտ միջոցներ եւ գործիքներ»: Սրբազանի կեցավայրում ժամեր տեւած խուզարկությունից հետո ԱԱԾ դիմակավորված աշխատակիցները ձերբակալել էին «Սրբազան պայքար» շարժման առաջնորդին: Ավելի ուշ նրան մեղադրանք

ներկայացվեց 2 հոդվածով՝ ահաբեկչություն եւ իշխանության յուրացում: Նրա հետ եւս 16 անձի մեղադրանք առաջադրվեց: Սրբազանը 11 ամիս մնաց կալանքի տակ: Նրա հետ միասին կալանավորվեցին եւ ամիսներ շարունակ կալանքի տակ պահվեցին նաեւ Սրբազան շարժման մի շարք համակիրներ: Իրավապահներն այդ ընթացքում սկսեցին տարածել կոնտեքստից կտրված ձայնագրություններ՝ դրանք վերագրելով Բագրատ սրբազանին: Այդ ձայնագրություններում խոսվում էր հնարավոր սպանությունների՝ «գյուլլելու», մեքենաներով վթարներ հրահրելու, հոսանքն ու ինտերնետն անջատելու եւ իշխանափոխությանն ուղղված այլ պլանների մասին: Իշխանամետ զանգվածը համաշխարհային աղմուկ բարձրացրեց:

Այդ ձայնագրությունները վարչապետ Նիկոլ Փաշինյանը հատիկ առ հատիկ տարածում էր ֆեյսբուքյան իր էջում: Ընդ որում, դրանց բովանդակությունը մեկնաբանելիս Փաշինյանը հիշատակում էր Վեհափառի եւ Սամվել Կարապետյանի անունները: Սակայն որոշ ժամանակ անց պարզվեց, որ դրանք կոնտեքստից կտրված ձայնագրություններ են, հայտնաբերված գործիքները խաղաղ քաղաքական պայքարի միջոցներ են, զրույցները վերաբերել են խաղաղ իշխանափոխությանը, եւ գործը սկսեց հանրության աչքի առաջ փլվել: Բայց ՔՊ-ականներն այդ ընթացքում, սովորության համաձայն, անտեսելով անմեղության կանխավարկած ասվածը, սրբազանին եւ նրա աջակիցներին վերջին հայհոյանքներն ու մեղադրանքներն էին ուղղում, համեմատում Նաիրի Հունանյանի եւ հոկտեմբերի 27-ի ահաբեկչության հետ, չնայած Սրբազան շարժման «գործողությունների» արդյունքում չկար որեւէ տուժող, իսկ Բագրատ սրբազանի կեցավայրում հայտնաբերված գունավոր ծուխը ոչնչով չէր տարբերվում Ազգային ժողովում տարիներ առաջ Լենա Նազարյանի ու Արարատ Միրզոյանի օգտագործած ծխից: ՔՊ-ական ռեժիմը եւ հատկապես Քննչական կոմիտեի նախագահը Բագրատ սրբազանի եւ նրա աջակիցների դեմ ամենաեղկելի ստերն էին տարածում, ահաբեկիչներ ու հանցագործ անվանում: Իսկ մեկ տարվա ընթացքում բոլոր «ահաբեկիչներն» ազատ արձակվեցին, տնային կալանքի տակ են միայն Արթուր Սարգսյանն ու Բագրատ սրբազանը, այն էլ՝ բացառապես քաղաքական որոշմամբ:

Փաստաբան **Հովհաննես Խուդոյանը**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով այս գործի մասին, ասաց. «Ապացուցման բեռը դատախազության վրա է: Գլխավոր դատախազը, Քննչական կոմիտեի նախագահն ամպագոռգոռ հայտարարություններ էին տարածում այս գործի վերաբերյալ, հիմա իրենց վրա է դրված՝ ապացուցելու այն, ինչ խոսում էին մեկ տարի առաջ: Մենք առարկություններ ենք ներկայացնում իրենց բերած ապացույցների դեմ: Այժմ սկսվել է ապացույցների հետազոտման փուլը: Օրինակ՝ ինչ-որ մարդկանց տներից օրինական զենքեր են հայտնաբերվել, որոնք ոչ մի կապ չունեն մեր գործի հետ, մեղադրյալ չեն, գուցե ինչ-որ շփումներ են ունեցել, սակայն առնվազն մեղադրյալ չեն, իսկ զենքերն օրինական են: Փորձում են տպավորություն ստեղծել, որ ահաբեկչության փորձ է կատարվել, սակայն մշտապես ասվել է, որ չի եղել նման բան: Իրավապահներն ինչ-որ մի պահի ֆիքսել են, որ Բագրատ սրբազանի պայքարը կարող է արդյունք տալ, եւ որոշել են այս եղանակով մարդկանց չեզոքացնել: Նպատակը շատ պարզ է՝ իշխանությունը պահելու համար ցանկացած հակառակորդի պատրաստ են չեզոքացնել: Արտուր Օսիպյանն ընդամենը որոշել էր խոսել Փաշինյանի հետ, ինչի համար կալանավորվեց: Իրավապահ գործիքներով, քարոզչությամբ եւ տարբեր մեթոդներով մարդկանց փորձում են հետապնդել: Եթե խոսում ենք իրավաբանության մասին, ապա սրբազանն ու այս գործով անցնող բոլոր անձինք պետք է արդարացվեն, քանի որ չկա գեթ մեկ ապացույց, որը կհիմնավորի այն մասին, թե իբրեւ ինչ-որ ապօրինություն պետք է տեղի ունենար»:

Նյութերը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

32 հազար ուսուցչից 13-ը ստանում է 700 հազար դրամ

Հունիսի 15-ին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին հարցում էի արել. «2025-2026 ուսումնական տարում ՀՀ հանրակրթական դպրոցների քանի՞ ուսուցչի միջին աշխատավարձն է եղել մինչեւ 300 հազար դրամ, քանի՞ ուսուցչի աշխատավարձն է գերազանցել 300 հազար դրամը»: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը պատասխանել է. «Ուսուցիչների մասնագիտական զարգացման եւ խրախուսման ծրագրերի արդյունքում (կամավոր ատեստավորում, տարակարգ, ԲՏՃՄ ոլորտի առարկաներ դասավանդող եւ գյուղական բնակավայրերում մինչեւ 100 սովորող ունեցող դպրոցների ուսուցիչների լրավճարների ծրագրերը) ներկայում 300.000-400.000 ՀՀ դրամ աշխատավարձ ստանում է 2 952 ուսուցիչ, 400.000-500.000 ՀՀ դրամ է ստանում 1362 ուսուցիչ, 500.000-600.000 ՀՀ դրամ է ստանում 220 ուսուցիչ, 600.000-700.000 ՀՀ դրամ է ստանում 70 ուսուցիչ, եւ 700.000 ՀՀ դրամ եւ ավելի աշխատավարձ է ստանում 13 ուսուցիչ»: Նախարարի տեղակալը չի պատասխանել այն հարցին, թե քանի ուսուցիչ է ստանում մինչեւ 300 հազար դրամ աշխատավարձ, իսկ այդ ուսուցիչները բացարձակ մեծամասնություն են: Նիկոլ Փաշինյանը բազմիցս հայտարարել է 700 հազար դրամ աշխատավարձ ստացող ուսուցիչների մասին, հանրակրթական դպրոցներում, փաստորեն, ընդամենը 13 ուսուցիչ է այդքան գումար ստանում՝ հանրապետության շուրջ 32 հազար ուսուցիչներից, իսկ 300 հազար դրամ եւ ավելի աշխատավարձ ստանում է ընդամենը 4 հազար 247 ուսուցիչ:

Ռոկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է, ԹԵ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՓՈԽԵԼՈՎ ՈՒԶՈՒՄ ԵՆ ԱՐՍԵՆ ԱՄԻՐՅԱՆԻՆ ՊԱՏԺԵԼ

Երեւանի Ամիրյան փողոցն անվանակոչվել է Պապ թագավորի անունով, որոշումը կայացվել է Երեւանի ավագանու հունիսի 23-ի նիստում:

«Ուզում եմ վերհիշենք, թե առհասարակ ով էր Արսեն Ամիրյանը, այստեղ, իհարկե, դժվար կլինի վերհիշելը, որովհետեւ դահլիճում նստածների 90%-ն այդպես էլ չհասկացան, թե այդ մարդն ով էր, եւ այդ մարդու անունով Երեւանի կենտրոնական փողոցում մենք ունենք փողոց: Ամենայն հարգանքով Ամիրյանների բոլոր սերունդների ու ժառանգների նկատմամբ, բայց ես վստահ չեմ, որ այդ մարդն այն արժանիքներն ունի, որ Երեւանի հրապարակին կից փողոցն իր անունով անվանակոչված լինի»,- ասել է քաղաքապետ Ավինյանը:

Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանն էլ, անդրադառնալով նախագծին, շեշտել է, որ սա հանրային լեգիտիմություն չունեցող նախագիծ է, առաջարկել է քննարկել նախագիծը, որպեսզի բոլոր մտավախությունները փարատվեն ու արգումենտավորվեն:

«Հիմա սա բերել ու չզեկուցվող հարցով անցկացնելն ինչ է նշանակում, ոչ ավագանու մեջ կա կոնսենսուս, ոչ էլ որեւիցե հանրային ազդակ կա, դիցուք՝ Ամիրյան փողոցի բնակիչներից որեւիցե մեսիջ: Առաջարկում եմ սա անպայման դարձնել քննարկվող, որպեսզի հասկանանք, թե ինչ փաստարկներից ելնելով պետք է փողոցն անվանակոչվի: Տպավորություն է, որ Պապ թագավորն օգտագործվում է, որպեսզի Ամիրյանի անունն անվանափոխվի»,- նշել է Սուքիասյանը: Տիգրան Ավինյանը Երեւան քաղաքում փողոց անվանակոչելու մասին հարցը զեկուցվող դարձնելու մասին առաջարկը դրեց քվեարկության, սակայն չանցավ, եւ արդյունքում հարցը մնաց չզեկուցվողների շարքում:

«Հաղթանակ» կուսակցության առաջնորդ **Վիկտոր Մնացականյանը**, մեզ հետ զրույցում խոսելով մայրաքաղաքի փողոցների անվանափոխության անհրաժեշտության մասին, ասաց. «Հարցին կփորձեմ պատասխանել որպես քաղաքային պլանավորող: Փողոց անվանափոխելը չպետք է դառնա ինքնանպատակ: Տպավորություն է, որ Ամիրյան փողոցի անվանումը փոխելով ուզում են Արսեն Ամիրյանին պատժել կամ ինչ-որ սանկցիա կիրառել: Կա քաղաքային կառավարման եւ քաղաքային պլանավորման հետ կապված մի տերմին, որը նաեւ հատուկ է դեմոկրատական երկրներին, այն կոչվում է մասնակցային կառավարում: Դա այն է, երբ դու բնակչին գործընթացների մասնակիցն ես դարձնում: Չի կարող Երեւանի ամենամեծ հրապարակին կից, ամենաճանաչված փողոցներից մեկի անունը փոխվել միայն այն բանի համար, որ ուզում ես պատժել պատմական ինչ-որ մի կերպարի: Այս հարցը շատ մարդաբանական հարց է: Օրինակ՝ ինչ-որ մեկն այս մասին խոսե՞լ է երեւանցիների հետ: Կո՞ղմ են արդյոք երեւանցիներն այդ որոշման հետ, թե՞ դեմ են: Ես կարծում եմ, որ նման փոփոխությունները պետք է արվեն տեղական փոքր հանրաքվեներով: Հնարավորություն մենք ունենք՝ նման բան անելու: Չի կարելի ֆեյսբուքյան լայքերի մակարդակով նման որոշումներ կայացնել: Աշխատանքի իմիտացիա են ստեղծում, սակայն իրականում վարկաբեկում են Երեւանի ավագանու որոշումները: Քանի որ ավագանու անդամների մեծ մասը ոչ կոմպետենտ են, երիտասարդ ու անփորձ են, պատկերը տրամաբանական է: Երեւանի ավագանին հավաքվում է ամիսը մեկ անգամ, իսկ առանցքային կարեւորություն ունեցող հարցերը չեն կարող նման պարբերականությամբ քննարկվել եւ լինել արդյունավետ: Նույնն է, որ ԱԺ նիստերն ամիսը մեկ անգամ լինեն: Քաղաքներում պետք է անպայման լինեն գեղագիտական խորհուրդներ: Այդ խորհուրդներն ինչի՞ համար են, նրա համար են, որ եթե, օրինակ, ինչ-որ մի վայրում ցանկանում ես տեղադրել արձան, ապա դա անպայման պետք է որոշվի մասնագիտական համապատասխան խորհրդի կողմից, այլ ոչ թե ինչ-որ թաղապետի կամ քաղաքապետի կողմից: Երեւանում կան ժողովրդական նկարիչներ, հայտնի ճարտարապետներ, շինարարներ, ճաշակով մարդիկ, մշակութային գործիչներ: Այդ մարդկանց հետ պետք է զրուցել: Խորհուրդը եթե լիներ, գոնե առնվազն պետք է եզրակացություն տար հիմա, թե ինչու են Ամիրյան փողոցն անվանափոխում: Պատկերացնո՞ւմ եք, եթե մեկն ընկնի Պապ թագավորի հետեւից, ինչքան վատ տեղեկություններ կարող է գտնել նրա մասին»:

ԳՅՈՒՄՐՈՒ

ԳՅՈՒՄՐՈՒ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՄՈՒՐ ԵՆ ԵՎ ԱՆԿՈՏՐՈՒՄ

Գյումրու ավագանու հունիսի 25-ի հերթական նիստը մեկնարկեց բավական անսպասելի եւ լարված մթնոլորտում: Իշխանությունը հերթական անգամ փորձեց խոչընդոտել ավագանու բնականոն աշխատանքը՝ այս անգամ փորձելով ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Կարեն Սիմոնյանին նիստից զրկելով անել դա, որ քվորումի բացակայության պայմաններում նիստը տապալվի: Մինչ ավագանու անդամները հավաքվում էին նիստերի դահլիճում, իրավապահները խուզարկություն էին անում Կարեն Սիմոնյանի բնակարանում, ինչի հետեւանքով նա չկարողացավ մասնակցել նիստին: Կարեն Սիմոնյանի բնակարանը խուզարկելու առիթը թերեւս նախօրեին հրապարակված մի գաղտնալսված խոսակցություն էր, որի ժամանակ ինչ-որ գյումրեցի կանայք ընտրությունների հետ կապված հարցեր են քննարկում, ձայներ բերելու մասին են խոսում, ինչ-որ գումարներ են մատնանշում, եւ նրանցից մեկը խոսքի մեջ ասում է՝ իմ ղեկավարը Կարեն Սիմոնյանն է:

Գյումրու ավագանու հերթական նիստը, որը պետք է լիներ ընթացիկ նստաշրջանի վերջին նիստը, այդպես էլ չկայացավ: Պատճառը քվորումի բացակայությունն էր: Ավագանու 33 անդամից նիստերի դահլիճում ներկա էր միայն 16-ը, մինչդեռ նիստը սկսելու համար անհրաժեշտ էր առնվազն 17 անդամի ներկայություն: Նիստին ամբողջ կազմով չէին ներկայացել իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամները՝ ակնհայտորեն նիստը տապալելու մտադրությամբ: Գյումրու ավագանիում ՔՊ-ն ունի 14 մանդատ, իսկ ընդդիմադիր ուժերը միասին՝ 19: Քվորումի բացակայության պայմաններում քաղաքապետին փոխարինող Ավետիս Առաքելյանը դիմեց նիստը վարողին. «Պարոն Մալխասյան, քվորում ունե՞նք, տեղյա՞կ եք, թե ինչու չկա «Քաղաքացիական պայմանագիրը»»: Մալխասյանը պատասխանեց. «Չէ, տեղյակ չենք»:

Օրենքի համաձայն՝ եթե ավագանու անդամների կեսից ավելին ներկա չէ, պետք է հայտարարվի կեսժամյա ընդմիջում՝ քվորում ապահովելու ակնկալիքով: Սակայն ընդմիջումից առաջ իրավիճակն ավելի թեժացավ, երբ ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության քարտուղար Աննա Մուրադյանը հայտարարեց, որ իրենց խմբակցության ղեկավար Կարեն Սիմոնյանի բնակարանում այդ պահին խուզարկություն է կատարվում, եւ խնդրեց հետաձգել նիստը: «Անսպասելի իրադարձությունների պատճառով խնդրում եմ նիստը հետաձգել 30 րոպեով»,- ասաց նա: Ավետիս Առաքելյանն էլ նկատեց. «Ուժային կառույցներից են հյուրերը՝ անակնկալ, եթե չեմ սխալվում՝ Հակակոռուպցիոն կոմիտեից են: Վերջին նիստն է այս նստաշրջանի, եւ ինչ-որ ձեւի ուզում են խոչընդոտել: Հարգելի իրավապահներ, թույլ տվեք, որ նիստին գա Կարեն Սիմոնյանը»:

Հայտարարվեց կեսժամյա ընդմիջում, սակայն դրա ավարտից հետո էլ պատկերը չփոխվեց: Պարզ է, որ գործադիր իշխանությունը՝ իրավապահ համակարգի հետ համատեղ, քաղաքական ճնշումներ է գործադրում: Ինքը՝ Փաշինյանն էլ չի թաքցնում, որ Գյումրին մնացել է իր կոկորդում, եւ ամեն ինչ անելու է, որ Գյումրիում եւս զավթի իշխանությունը:

Ավագանու նիստի քվորումը չապահովվեց նաեւ ընդմիջումից հետո, եւ նիստը պաշտոնապես համարվեց չկայացած: Դահլիճում շարունակում էին բացակայել ՔՊ խմբակցության անդամները, իսկ Կարեն Սիմոնյանն այդպես էլ չկարողացավ մասնակցել նիստին՝ իրավապահների գործողությունների պատճառով:

Վարման կարգով ելույթ ունենալով՝ Ավետիս Առաքելյանը տեղի ունեցածը համարեց նախապես մշակված սցենար: «Այն, ինչ տեղեկացել էինք որոշ աղբյուրներից, որ պետք է տապալեն Գյումրու ավագանու նիստը, հենց այդ սցենարով էլ գնում են: Օրեր շարունակ իշխանությունը թեզ էր առաջ տանում, թե Գյումրիում կա կառավարման ճգնաժամ»,- հայտարարեց նա: Թե ինչու ընդդիմադիր մեծամասնությունը, ունենալով 19 մանդատ, չկարողացավ ապահովել անհրաժեշտ 17 ձայնը, դա էլ ունի իր բացատրությունը: Այդ 19 մանդատներից մեկը պատկանում է քաղաքապետ Վարդան Ղուկասյանին, որը գտնվում է կալանքի տակ: Մեկ մանդատ պատկանում է «Մեր քաղաքը» դաշինքի անդամ Արտակ Հովսեփյանին, որը տնային կալանքի տակ է, իսկ նրա մանդատի փոխանցման գործընթացը դեռ ավարտված չէ: Երրորդ բացական, ինչպես արդեն նշվեց, Կարեն Սիմոնյանն էր: Սակայն նիստի տապալումից անմիջապես հետո իրավիճակը փոխվեց: «Մեր քաղաքը» խմբակցության ղեկավար Լիզա Գասպարյանը տեղեկացրեց, որ իրենց ցուցակի հաջորդ թեկնածուն՝ Արա Պետրոսյանը, ժամեր անց ստանալու է ավագանու անդամի մանդատը՝ փոխարինելով տնային կալանքում գտնվող Արտակ Հովսեփյանին: Եթե նա հասցնի վերցնել մանդատը, ապա առաջիկայում ավագանու արտահերթ նիստ կհրավիրվի, եւ, մեծ հավանականությամբ, քվորում կապահովվի, ու այն կկայանա: Ի դեպ, ավելի ուշ թիվ 33 ԸՀ նախագահ Տիգրան Ղազարյանը մեզ հետ զրույցում հաստատեց, որ Արա Պետրոսյանին արդեն տրվել է մանդատը:

Այսպիսով արձանագրենք, որ իշխանությունը հերթական անգամ նենգությամբ փորձեց քաղաքական եւ իրավապահ գործիքակազմի համադրությամբ խափանել համայնքային կառավարման մարմնի՝ ավագանու աշխատանքը, բայց չհասավ իր նպատակին: Մեկ մանդատի հարցը փաստացի լուծված է, եւ ընդդիմադիր մեծամասնությունը հայտարարում է, որ առաջիկայում կգումարի արտահերթ նիստ: Ուստի, իշխանության կողմից շրջանառվող «կառավարման ճգնաժամի» թեզի ֆոնին, Գյումրին ցույց է տալիս, որ չի հանձնվում, իսկ ավագանին՝ բոլոր խոչընդոտների պայմաններում, պատրաստվում է շարունակել իր գործունեությունը: Նման բան, որ գործող իշխանությունը միտումնավոր կազմալուծի եւ տապալի պետական կառույցների աշխատանքը, արհեստական ճգնաժամեր ստեղծի, որ խլի ժողովրդի կողմից ընտրված անձանցից համայնքային իշխանությունը, երեւի մարդկությունը հազվադեպ է տեսել:

Ի պատիվ Գյումրու իշխանությունների, շեշտենք, որ նրանց հաջողվում է տապալել իշխանական ծրագրերը եւ միայնակ դիմակայել ՔՊ-ական խարդավանքներին:

Արեւիկ ՀԱԿՈԲՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԳՅՈՒՂՄԹԵՐՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ

«Մեր միրգ-բանջարեղենի հանդեպ մեծ հետաքրքրություն կա թե՛ ԵՄ-ում, թե՛ Թուրքիայում, թե՛ Ասիայում»,- կառավարության նիստի ժամանակ երեկ նման անսպասելի հայտարարություն է արել արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը: «Հայկական գյուղատնտեսական ապրանքների հանդեպ, մասնավորապես մրգերի, բանջարեղենի, հատապտուղների եւ ծաղիկների նոր շուկաների փնտրտուքն իսկապես մեծ հետաքրքրություն է առաջացրել բազմաթիվ տեղերում, օրինակ՝ Եվրոպական Միության շուկայում, Կենտրոնական Ասիայում, Իրաքում, ինչպես նաեւ՝ անմիջական հարեւան երկրներից Թուրքիայում: Փորձնական եւ գուցե նաեւ հետագայի պոտենցիալով արտահանում արվում է, չեմ կարող թաքցնել, եւ իմաստ էլ չունի, այո, լոգիստիկ խնդիրներ առաջանում են, բայց այդ ամբողջը նայում ենք, կառավարում ենք, փորձում ենք օգնել բիզնեսներին: Ես էլ եմ կարծում, որ այս մարտահրավերով հանդերձ, մեզ համար շատ մեծ հնարավորություններ ստեղծվեցին: Մեծ հաշվով, տեղի է ունենում այն, ինչ մենք երկար ժամանակ խոսում եւ պլանավորում էինք, դա հայկական արտադրանքի բազմազանեցում է»,- նշել է Միրզոյանն ու հավելել՝ վերջին մարտահրավերները Հայաստանում լուրջ ճգնաժամի չեն վերածվել, եւ թվերը դրա մասին են վկայում: Իհարկե, ճգնաժամի վերածվել են, թե չեն վերածվել՝ դա միայն գյուղմթերք արտադրողներն ու արտահանողները կասեն: Մենք անդրադառնանք մեր գյուղմթերքի հանդեպ այլ երկրների «մեծ հետաքրքրությանը»:

Ինչպե՞ս կարող է գյուղմթերքի խոշոր արտահանող Թուրքիայում մեծ հետաքրքրություն լինել հայկական գյուղմթերքի նկատմամբ՝ հարցրինք տնտեսագետ **Գագիկ Մակարյանին**: Գուցե Միրզոյանի ասածի տակ այլ բան կա, օրինակ՝ Թուրքիայում քողարկված նպատակներ կան, դիցուք՝ հայկական գյուղատնտեսությունը խժռելու իմաստով: Տնտեսագետը չբացառեց, որ Թուրքիայում կարող է հետաքրքրություն առաջանալ մեր «արեւաբույր» մրգերի ու բանջարեղենի նկատմամբ, բայց չթաքցրեց, որ այդ հետաքրքրությունն իսկապես ռիսկեր է պարունակում: «Մեր մրգերն ավելի համեղ են ու արեւաբույր եւ պարարտանյութերի տեսանկյունից էլ ավելի չափավոր են, օրինակ՝ ծիրանը կամ ելակը: Նրանց ծիրանները համեղ չեն, մեր ծաղիկներն էլ կարող են հետաքրքրել, որովհետեւ հայկական չեն՝ եվրոպական են: Բայց խնդիրն ուրիշ է, բոլոր պաշտոնյաները փորձում են համոզել, որ ճգնաժամ չկա ներկա իրավիճակով՝ արտահանումների սահմանափակումներով պայմանավորված, բայց այդպես չէ»,- ասաց Մակարյանը՝ նշելով, որ, նախ, ամառը նոր է սկսվել, եւ միրգ-բանջարեղենի իրացման ծավալներն օրեցօր ավելանալու են, հետեւաբար՝ դեռ վաղ է ուրախանալը, որ ճգնաժամ չկա. «Հիմա արդեն տուժել են փոքր ֆերմաները, որոնք մինչեւ 5-10 տոննա ծիրան կամ լոլիկ են ստանում, որովհետեւ իրենք խոշոր ֆերմաներ չեն, չունեն սերվերներ, լոգիստիկա, որ կարող են մեքենաները սառնարաններով որտեղ ուզեն՝ ուղարկեն: Նրանք հիմնականում վաճառում էին, եւ բերքը Ռուսաստան էր գնում, հազարավոր նման փոքր ֆերմաներ տուժել են, քանի որ նաեւ պետությունից սուբսիդիաներ չեն ստանում: Կարծում եմ, որ ճգնաժամը հասունանում է, քանի որ բերքի քանակը նոր պետք է ավելանա»:

Խոսելով հայկական գյուղատնտեսությունը խժռելու վտանգների մասին՝ Գագիկ Մակարյանը հիշեցրեց, որ ավելի վաղ ինքը բարձրաձայնել է Թուրքիայից սպասվող վտանգների մասին. «Դա միայն այն չէ, որ Թուրքիայից ապրանքներ են բերում այստեղ, այլ այն, որ Թուրքիան սկսի մխրճվել մեր տնտեսության մեջ. դրանք շատ տարբեր մոդելներ են: Մեր պաշտոնյաները մինչեւ վերջերս խոսում էին, թե առեւտուրն առանձնապես մեծ վտանգներ չի ներկայացնում՝ որքան ենք բերում, ինչքան կավելանա, բայց Թուրքիայի էքսպանսիան տնտեսական առումով է վտանգավոր լինելու: Հիմա եթե իրավիճակները սրվեն, եւ ֆերմերները տեսնեն, որ տակ տվեցին, ու հեռանկար չունեն իրենց ինտենսիվ այգիները կամ ջերմոցները, իրենք կարող են դա վաճառել: Իսկ ո՞վ ասաց, որ թուրքական որեւէ մեկը չի ցանկանա ձեռք բերել: Մանավանդ որ Թուրքիան շատ վարպետացած է Եվրամիության արտահանումների մեջ, Թուրքիան դեռ 90 թվականներից եվրոպական մթերքների 40 տոկոսից ավելն էր ապահովում, հիմա՝ գրեթե կեսը: Ուստի նա կարող է վերցնել մեր տնտեսությունը, քանակներն ավելացնել, բայց ամենակարեւորը՝ էքսպանսիա անի, ջերմոցներ կառնի, այգիներ, մի տեղում փայատեր կդառնա, հետո հնարավոր է անշարժ գույքի շուկա մտնի եւ այլն: Այդ բնակարանները վաճառի իր ուզած ազգերին, մարդկանց: Եթե մտածում էինք երկաթգիծ, ճանապարհներ բացել, այդ տարբերակները եւ լավ, եւ ռիսկային կողմեր ունեն, որովհետեւ, ինչպես նշեցի, թուրքական էքսպանսիան կարող է մեծանալ եւ տնտեսապես գրավելով, ներդրումներ կատարելով՝ ձեռք բերի մեծ գույք եւ տնտեսության մեջ դառնա որոշիչ»:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԻՐԱՎ

ՄՈՑԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՌԱԶՄԱԲԱԶԱՆԵՐԸ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԿԱՐԵՎՈՐ ԵՆ ԱՄՆ-Ի ՀԱՄԱՐ, ՔԱՆ TRIPP-Ը

«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ, ԱՄՆ Լիհայի համալսարանի պրոֆեսոր **Արման Գրիգորյանն** է:

- Իրանն ու ԱՄՆ-ն նստել են բանակցությունների սեղանի շուրջ. լավատեսական ազդակներ են գալիս, հատկապես՝ Իրանից, որտեղ Թրամփի վարչակազմի հետ համաձայնությունները մեծ առաջընթաց են համարում, իսկ հուշագրի բոլոր կետերը՝ ժողովրդի շահերին համապատասխանող: Ի՞նչ կարելի է արձանագրել այս պահին, որքանո՞վ են կողմերն անկեղծ միմյանց հետ:

- Ինձ թվում է՝ կողմերն անկեղծ են պատերազմը դադարեցնելու ու ինչ-որ համաձայնության գալու առումով: ԱՄՆ-ն հասկանում է, որ պատերազմը շարունակելն անհեռանկար է, որ իրանական ռեժիմի փոփոխության կամ Իրանին կապիտուլյացիա պարտադրելու հույսերը ոչ մի շանս չունեն՝ իրականություն դառնալու: Միեւնույն ժամանակ, պատերազմը շարունակելը կարող է պարզապես աղետալի հետեւանքներ ունենալ ԱՄՆ տնտեսության վրա: Շատերը նաեւ անհանգստացած են այս պատերազմի հետեւանքով ԱՄՆ-ի ռազմական որոշ կարողությունների հյուծման փաստով: Իրանն իր հերթին հասկանում է, որ առայժմ այն, ինչ իրենք կարող են ստանալ այս բանակցությունների միջոցով՝ միջուկային ծրագրի պահպանում, Հորմուզի նեղուցի վրա միջազգայնորեն ճանաչված վերահսկողություն, Իրանի սառեցված ակտիվների ապասառեցում, Լիբանանում ԱՄՆ-ի կողմից երաշխավորված զինադադար, ամերիկյան ռազմական ներկայության սահմանափակում Իրանի հարեւանությամբ, մաքսիմումն է, ինչին նրանք կարող են ներկա պահին հավակնել: Իհարկե, այս խնդիրների շուրջ համաձայնության գալը հեշտ չէ, բայց հիմնական խոչընդոտը փոխադարձ ընդունելի լուծումների անհնարինությունը չէ: Հիմնական խոչընդոտն Իսրայելն է, որը համարում է եւ ճիշտ է համարում, որ նման համաձայնության կայացումը սպառնալիք է Իսրայելի շահերին: Իսրայելը նաեւ այս գործընթացը վիժեցնելու լծակներ ունի:

- Թեհրանի եւ Վաշինգտոնի բանակցությունների ֆոնին ԱՄՆ Սենատը բանաձեւ է ընդունել, որով պահանջում է նախագահ Թրամփին՝ դադարեցնել Իրանի դեմ ռազմական գործողությունները: Վերջինս անիմաստ է համարել այդ որոշումը՝ միաժամանակ նշելով, որ դրանով ամերիկացի սենատորներն օգնում են Իրանին եւ խոչընդոտում բանակցային գործընթացին: Երեկ Թրամփի գրառումից տեղեկացանք, որ սենատորները հետ են կանչել այդ որոշումը, Թրամփը հաղթել է:

- Անկախ Թրամփի հակազդեցությունից, հստակ է, որ ինքն էլ է շատ լավ հասկանում պատերազմը շարունակելու անհեռանկարայնությունը, ինչն ակնհայտորեն հասկանում են նաեւ ԱՄՆ օրենսդիրները:

- Այս ընթացքում Իսրայելում դժգոհել են, թե դաշնակից ԱՄՆ-ն «ծախում» է իրենց, թեեւ Նեթանյահուն հրամայել է բանակցությունների ընթացքում դադարեցնել Լիբանանին հարվածելը, պայման, որը դրված է ամերիկա-իրանական համաձայնագրի հիմքում: Կկարողանա՞մ Թրամփը դուրս գալ հրեական լոբբինգի ազդեցությունից, չնայած արտաքուստ ներկայացվող լարվածությանը Իսրայելի ղեկավարության հետ:

- Սա ամենակարեւոր հարցն է, որի պատասխանից կախված է ԱՄՆ-Իրան բանակցությունների հաջողելու կամ ձախողվելու մասին որեւէ դատողություն: Ինչպես արդեն նշեցի, խաղաղ լուծումը սպառնալիք է Իսրայելի համար: Մասնավորապես, ոչ միայն կարելի է մոռանալ ռեգիոնալ հեգեմոնիայի՝ Իսրայելի հավակնությունների մասին, ինչը, իմ խորին համոզմամբ, այս պատերազմի գլխավոր պատճառն էր, այլ նաեւ դժվար է պատկերացնել, որ նրանք կարող են ավարտին հասցնել Գազայում սկսածն ու դուրս մղել պաղեստինցիներին Գազայից ու Արեւմտյան ափից կամ ոչնչացնել նրանց, ինչն արդեն երկար ժամանակ նրանք համարում են անխուսափելի եւ իրականանալի, եթե Իսրայելը պետք է շարունակի գոյություն ունենալ որպես հրեական պետություն՝ առանց հենվելու ապարտեիդի մոդելի վրա: Իսկ դա այսօրվա Իսրայելում կարող է հանգեցնել լուրջ ներքին անկայունության: Հետեւաբար, Իսրայելն ու ԱՄՆ-ում Իսրայելի շահերը պաշտպանող հզորագույն լոբբին ամեն ինչ անելու են, որպեսզի խանգարեն համաձայնության կայացմանը: Սակայն, միեւնույն ժամանակ, բոլորովին հստակ չէ, թե այդ համաձայնության նրանց առաջարկած այլընտրանքը որն է: Բացի այդ, ես իրենց փոխարեն խիստ տագնապած պիտի լինեի ԱՄՆ-ում ահագնացող հակաիսրայելական ու հակահրեական տրամադրություններից: Իհարկե, նրանք տակավին շատ մեծ ազդեցություն ունեն քաղաքական վերնախավերի ու համակարգի վրա, բայց ի վերջո նշածս հանրային տրամադրությունները միայն հանրային տրամադրությունների մակարդակում չեն մնալու: Դրանք քաղաքական հետեւանքներ են ունենալու, ու որքան կատաղի լինի դիմադրությունը, որքան ամբարտավան լինի լոբբին իր վարքագծում, այդքան ավելի աղետալի են լինելու հետեւանքները, երբ դրա դիմադրությունը կոտրվի: Թրամփը՝ ինքը, արդեն «շլինքը լոբբիի կրնկի տակից» հանելու նշաններ է ցույց տալիս: Վերջերս Թրամփի ու Նեթանյահուի հեռախոսային զրույցների մասին առնվազն երկու արտահոսք եղավ, որտեղից տեղեկանում ենք, որ Թրամփն սկսել է սպառնալիքներ տեղալ Նեթանյահուի վրա ու խիստ պահանջներ ներկայացնել: Շատ ուշագրավ էր նաեւ փոխնախագահ Վենսի վերջին ելույթներից մեկը, որտեղ նա բաց տեքստով խոսում էր այն մասին, թե ինչ կարող է տեղի ունենալ Իսրայելի հետ, եթե վերջինս զրկվի ամերիկյան աջակցությունից: Սա է իրավիճակը, ու հնարավոր է, որ Իսրայելում սկսեն հասկանալ, թե իսկապես իրենց հետ ինչ կկատարվի, եթե նրանք կորցնեն ԱՄՆ-ի աջակցությունը, չնայած Իսայելի քաղաքական համակարգն ու վերնախավն այն աստիճանի են այլանդակվել, նրանք այն աստիճանի են կորցրել չափի ու վտանգի զգացողությունը, որ նման շրջադարձ կանխատեսելը հեշտ չէ:

- Իսկ ի՞նչ կարող է տալ իրանա-ամերիկյան թնջուկի խաղաղ հանգուցալուծումը մեր տարածաշրջանին, մասնավորապես՝ Հայաստանին, հաշվի առնելով TRIPP-ի նկատմամբ Թեհրանի վերապահումները, ինչպես նաեւ՝ թուրք-ադրբեջանական գործոնը:

- Եթե նման հանգուցալուծում լինի, այն չի կարող չանդրադառնալ մեր տարածաշրջանում առկա բալանսի վրա: TRIPP-ն ակնհայտորեն ոչ միայն տնտեսական, այլեւ աշխարհաքաղաքական նախագիծ է: Դրա վատ քողարկված կամ իրականում ընդհանրապես չքողարկված նպատակներից մեկը Ռուսաստանին ու Իրանին տարածաշրջանից մեկուսացնելն է: Շատ դժվար է պատկերացնել, որ այն որեւէ խմբագրման չի ենթարկվելու Իրանի հետ պատերազմում ԱՄՆ-ի կրած պարտությունից հետո, այն դեպքում, երբ Իրանը պահանջում է էվակուացնել Ծոցի ամերիկյան ռազմաբազաները, երբ այդ ռազմաբազաները շատ ավելի կարեւոր են ԱՄՆ-ի համար, քան՝ TRIPP-ը:

Արա ԱԼՈՅԱՆ

ԵՍ ԲԱՆԱԿՈՒՄ ՍԻՐՈՎ ԾԱՌԱՅԵԼ ԵՄ, 44-ՕՐՅԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ ԷԼ ՈՐՊԵՍ ՇԱՐՔԱՅԻՆ ԵՄ ԳՆԱՑԵԼ

Պ նախընտրական ծրագրում բացահայտորեն ներառված էր հակաեկեղեցական արշավը մինչեւ վերջ հասցնելու միտքը, եւ, ամենայն հավանականությամբ, հետընտրական որոշակի գործընթացներից հետո Նիկոլ Փաշինյանը վերսկսելու է իր սեւ գործը՝ Հայ առաքելական եկեղեցին որպես ինստիտուտ վերացնելը՝ Վեհափառին հեռացնելու ճանապարհով, չնայած «Հրապարակը» գրել էր, որ Վեհափառը վստահեցրել է՝ նույնիսկ կյանքի գնով հրաժարական չի տալու: Այս եւ այլ հարցերի մասին զրուցել ենք Բյուրականի Սուրբ Հովհաննես եկեղեցու հոգեւոր հովիվ **Տեր Վրթանես քահանա Բաղալյանի** հետ:

- Նիկոլ Փաշինյանը Վեհափառի դեմ կգնա՞մ կոշտ ու վտանգավոր քայլերի:

- Վեհափառն իր գործը պատշաճ անում է ու կշարունակի անել: Աստված մեծ է, նա մեր կողքին է, մենք մեր առաքելությունն անում ենք եւ որեւէ խնդիր չունենք, որեւէ դժվարությունից, հալածանքից, հոգսից, խնդրից որեւէ կերպ չենք երկնչում: Կարծում եմ, որ ծայրահեղ տարբերակներ չեն լինի:

- Մտահոգություն չկա՞, որ Փաշինյանն իր խոստումը կյանքի կկոչի՝ Եկեղեցու դեմ արշավը կշարունակի:

- Չեմ կարող ենթադրել, թե ինքն ինչ կանի, որեւէ կերպ չենք պատկերացնում: Բայց մենք մեր անելիքները գիտենք՝ մենք հաստատուն ենք, մենք մեր տեղում ենք:

- 2 հոգեւորականի Ռուսաստան թույլ չտվեցին վերադառնալ՝ զորահավաքի են կանչել:

- Բանակում եւ ժամկետային, եւ պայմանագրային հավաքներին մասնակցելը, ցանկացած կարգավիճակով, պատիվ ու երջանկություն է: Հրաշալի է, թող մեր հոգեւոր եղբայրները գնան, փորձառություն ձեռք բերեն, որեւէ խնդիր չեմ տեսնում:

- Բայց մարդիկ չեն պատկերացնում հոգեւորականին շարքային զինվորի կարգավիճակում ու ասում են, որ դա կարող է ազդել հոգեւորականի իմիջի վրա:

- Տեր հայրերի ներկայությունն ավելի զսպող կլինի, ոնց որ մենք՝ հենց հոգեւոր սպասավոր կամ գնդերեց ծառայում էինք, այդպիսին էր իրավիճակը:

- Իսկ դա չի՞ վնասի Եկեղեցու՝ որպես ինստիտուտի գործունեությանը:

- Եկեղեցու ինստիտուտին որեւէ կերպ չի վնասի, բայց եթե դա արվում է որպես պատիժ, խտրական վերաբերմունք, դա պատշաճ չէ, կոռեկտ չէ: Նորմալ է դա, եթե ընդդիմադիրների նկատմամբ խտրական դրսեւորում է, դա կոռեկտ չէ, բայց եթե հավաքի կարիք եւ ծառայության անհրաժեշտություն կա, հոգեւորականները ծառայությունից երբեք չեն խուսափել, ես՝ ինքս, բանակում սիրով ծառայել եմ եւ, ինչու չէ՝ 44-օրյայի ժամանակ շարքային եմ գնացել, բայց իմ հանդեպ որեւէ անհարգալից վերաբերմունք չի եղել:

- Հայկական թեմերի գործունեությանը դա չի՞ վնասի, հաշվի առնելով մեր հոգեւորականների քանակը, զորահավաքի կանչված քահանաները ծառայություն են մատուցում Ռուսաստանի հայոց թեմում:

- Եկեղեցիների, վանքերի գործունեությանը խոչընդոտ չի լինի, տեր հայրերը եթե բանակ գնան, հավաքի մասնակցեն, իրենց քարոզչությունն այնտեղ կիրականացնեն, որտեղ էլ որ լինեն: Որեւէ կերպ մենք նման հարցերում խնդիր չենք տեսնում, Եկեղեցին իր առաքելությունը պատշաճ կերպով կատարում է՝ Վեհափառ հայրապետի գլխավորությամբ, եւ կշարունակի կատարել, անկախ բոլոր տեսակի խնդիրներից: Մենք մեծ սիրով, ես՝ ինքս, ցանկացած իրավիճակում, եթե հայրենիքին վտանգ սպառնա, պատրաստ եմ ամեն պահի գնալ եւ մեր հայրենիքը պաշտպանել: Եվ կարծում եմ՝ տեր հայրերի մեծագույն մասը պատրաստ է հայրենիքը պաշտպանել: Բոլորիս համար, առավել եւս՝ իշխանավորների համար, բանակում ծառայելը պիտի պատիվ լինի, երջանկություն լինի, ովքեր առողջական կամ այլ պատճառներով օրինական ազատվել են՝ լավ, իսկ ովքեր ապօրինի ձեւով իրենց ծառայությունից խուսափել են, ամոթ ու նախատինք են նման երեւույթները:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՆԻՍՏ

ՊՐԻՄԻՏԻՎ, ՊՐԻՄԻՏԻՎ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Փոխվարչապետ աշխատող Միհր Գրիգորյանը եւ նրա ղեկավար Նիկոլ Փաշինյանը կառավարության նիստում քննարկում են Հայաստանից ապրանքների արտահանման, Ռուսաստանի կողմից հայ արտադրողների նկատմամբ սահմանված արգելքները, շուկաների դիվերսիֆիկացումը եւ նոր շուկաներին հայկական ապրանքների որակական չափանիշների համապատասխանության հարցը: Երկրի տնտեսությամբ զբաղվող այս երկու առանցքային պաշտոնյաների քննարկումը ցույց է տալիս, թե ինչպիսի մարդիկ են զբաղվում Հայաստանի տնտեսական կյանքի կազմակերպմամբ, եւ, ըստ այդմ, հասկանալի է դառնում, թե ինչու է Հայաստանի տնտեսության վիճակն այսքան ողբերգական: Այս մարդիկ տարրական պատկերացում անգամ չունեն միջազգային տնտեսական հարաբերություններից եւ առաջնորդվում են գրքային կամ չգիտեմ էլ որտեղից լսած ճշմարտություններով:

Որպեսզի պարզ լինի, փորձենք կարճ ներկայացնել նրանց երկխոսության բովանդակությունը. Միհր Գրիգորյանն ասում է, որ շուկաների դիվերսիֆիկացիան կլուծի նաեւ ապրանքների որակի շուրջ եղած խոսակցությունները, որովհետեւ, եթե Հայաստանի ապրանքներն առաքվում են միայն մի երկիր՝ Ռուսաստան, այդ երկիրը կարող է ցանկացած պահի ասել, որ ձեր ապրանքներն անորակ են կամ չեն համապատասխանում մեր շուկայի պահանջներին, իսկ եթե արտահանվում է 15-20 երկիր, ապա այդ հարցը փակվում է, որովհետեւ չի կարող 14 երկրի համար լինել որակով, համապատասխանել այդ երկրների չափանիշներին, իսկ, օրինակ, Ռուսաստանի համար լինել անորակ: Բայց Ռուսաստանը չի էլ թաքցնում, որ Հայաստանի դեմ սահմանված արգելքները քաղաքական են, ուղղակի դրանց տրվում է այլ ձեւակերպում, միթե Ռուսաստանի իշխանության ներկայացուցիչները չեն պնդում, որ Հայաստանը պետք է կողմնորոշվի ԵՄ-ի եւ ԵԱՏՄ-ի միջեւ, իսկ այդ հարցը տնտեսական չէ, այլ՝ քաղաքական: Միհր Գրիգորյանը երեւի չգիտի, որ աշխարհում չկան ազատ շուկայական հարաբերություններ, որ դրանք միայն գրքերում են գրված՝ Ադամ Սմիթի կամ Դեյվիդ Ռիկարդոյի աշխատություններում: Իրական կյանքում յուրաքանչյուր երկիր պաշտպանում է իր շուկան՝ այնտեղ թույլ տալով մուտք գործել միայն բարեկամ եւ դաշնակից երկրներին, թող տեսնեն, թե ինչպես են ԱՄՆ-ն, Չինաստանը կամ այլ երկրներ պաշտպանում իրենց շուկաները, եւ կհասկանան, որ ոչ մի երկիր թույլ չի տալիս, որ ինչ-որ մեկը մտնի այնտեղ եւ ազատ ման գա: «Ազատ շուկայական հարաբերություն» հասկացությունը ստեղծել են հզորները՝ թույլերի շուկաները գրավելու եւ այդ շուկաներն իրենց ապրանքներով հեղեղելու, դրանք իրենց համար սպառման շուկա դարձնելու համար:

Հիմա անցնենք Նիկոլ Փաշինյանին. ի պատասխան Միհր Գրիգորյանի սույն խոր տնտեսագիտական վերլուծության, Փաշինյանն ավելի խորախորհուրդ միտք է արտահայտում. ասում է, որ շուկաների դիվերսիֆիկացիա տեղի է ունենում ոչ միայն Հայաստանում, այլեւ ԵԱՏՄ անդամ մյուս երկրներում, եւ երբ նրանք նայում են եւ տեսնում են, թե ինչպես է իրենց հետ վարվում Ռուսաստանը, նրանց մոտ մտահոգություն է առաջանում, որ նույնը կարող է տեղի ունենալ նաեւ իրենց հետ:

Ռուսաստանը երբեք դեմ չի եղել, որ Հայաստանը դիվերսիֆիկացնի իր արտահանման կամ ներմուծման շուկաները, եւ ոչ էլ մյուս երկրների դեպքում է նման արգելք դրել, նույնիսկ տրամաբանական էլ չէր լինի: Ռուսաստանը Հայաստանին այլ բան է ասում, ասում է՝ ԵՄ-ն իմ աշխարհաքաղաքական թշնամին է, այդ դաշինքն իմ դեմ պատերազմում է, եւ այդ թշնամանքն ավելի է խորանում՝ այն աստիճան, որ ԵՄ երկրները չեն բացառում, որ 2030 թվականին ՌԴ-ԵՄ պատերազմը կարող է Ուկրաինայից տեղափոխվել ԵՄ տարածք: Նրանք ասում են՝ կողմնորոշվեք. դուք մեր դաշնակի՞ցն եք, թե՞ թշնամին, եթե թշնամին եք, մենք ձեզ պետք է վերաբերվենք որպես թշնամու: Սրանից պարզ ուղղակի հնարավոր չէ ասել, այլ հարց է, որ Միհր Գրիգորյանը կամ Նիկոլ Փաշինյանը չեն հասկանում կամ չեն ուզում հասկանալ: Ի տարբերություն Հայաստանի, ԵԱՏՄ որեւէ այլ անդամ երկիր չի հայտարարում ԵՄ-ին միանալու մտադրության մասին, դրա հետ կապված օրենք չի ընդունել:

Փաշինյանը կառավարության նիստի իր ելույթում այնքան առաջ գնաց, որ հայտարարեց ԵԱՏՄ-ի ինքնալուծարման մասին: «Ես մեր գործընկերներին հարցեր ունեմ այն հայտարարության հետ կապված, որ նրանք իմ բացակայությամբ ընդունել են, եւ մենք պետք է հասկանանք՝ դա ինչ ա նշանակում գործնականում, այսինքն, մենք պետք ա հասկանանք՝ ԵԱՏՄ անդամ ցանկացած երկիր ցանկացած երկրի հետ կապված սենց որոշումներ կարող ա՞ կայացնի, ընտենց ուղղակի մի օր արթնանա՝ որոշումներ կայացնի: Իմ գնահատմամբ՝ եթե էս հարցի պատասխանը այո ա, ուրեմն ԵԱՏՄ-ն հայտարարում ա ինքնալուծարման մասին, եւ մենք ստեղից պետք ա հետեւություններ անենք»:

Հիշեցնենք, որ խոսքը մայիսի 29-ին Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում տեղի ունեցած ԵԱՏՄ բարձրագույն խորհրդի նիստի հայտարարության մասին է, որով ԵԱՏՄ չորս երկրներ իրենց հայտարարությամբ Հայաստանին կոչ էին անում հանրաքվե անցկացնել եւ ի վերջո կողմնորոշվել՝ Հայաստանը մնո՞ւմ է ԵԱՏՄ կազմում, թե՞ գնում է ԵՄ անդամակցության ուղով: Նախ, այդ հայտարարությունը չի ընդունվել մի օրում, արդեն մի քանի տարի Ռուսաստանը եւ ԵԱՏՄ տարբեր պաշտոնյաներ այդ հարցը բարձրաձայնում են, եւ Փաշինյանը, եւ իր կառավարությունը խուսափում են այդ հարցին ուղիղ պատասխանելուց, անընդհատ ցրելով, իրենց ճարպիկ, հնարամիտի տեղ դնելով, մինչեւ որ բանը հասավ հայտարարությամբ դիմելուն: Ինչ վերաբերում է ԵԱՏՄ ինքնալուծարմանը, ապա Փաշինյանի առաջ խնդիր էր դրվել՝ լուծարել այդ կառույցը՝ առնվազն Հայաստանն այդ կառույցից դուրս բերելով, հիմա նա կարող է համարել, որ առաջադրանքն իր մասով կատարել է:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿՈՒՄ Է ԺՈՂՈՎՐԴԻ «ԱՉՔԵՐԸ», ԲԱԲՈՒՆ՝ «ԲԱՑՈՒՄ ԱԽՈՐԺԱԿԸ»

Ինչպես հայտնի է, հունիսի 24-ին Վաշինգտոնում, Կապիտոլիումի բլրի վրա գտնվող Կոնգրեսի շենքում, Ադրբեջանի ստեղծած եւ այդ երկրից ֆինանսավորվող Բաքվի նախաձեռնողական խմբի կողմից կազմակերպվել էր, այսպես կոչված, «Վերադարձի եւ ինքնորոշման իրավունք. կրկնակի չափանիշներ եւ ընտրողական մոտեցումներ» խորագրով միջազգային կոնֆերանս-քննարկում: Այս մասին հայտնել էին ադրբեջանական ՁԼՄ-ները, եւ բազմաթիվ հրապարակումներ կային միջազգային մամուլում:

Խոսքը, նախաձեռնողների տեղեկացմամբ, վերաբերում էր իբր ժամանակին «Հայաստանից արտաքսված ադրբեջանցիների» ճակատագրին: Այն, ինչը ՀՀ իշխանությունները համառորեն հերքում են եւ Հայաստանում ադրբեջանցիների բնակեցման փաստերն էլ համարում հիբրիդային պատերազմի արդյունք, ընդդիմության հիվանդ մտքի երեւակայություն, պարզվեց՝ արդեն ամերիկյան Կոնգրեսում է քննարկվում:

Ըստ ադրբեջանական աղբյուրների, այդ կոնֆերանսին մասնակցել են «փախստականների եւ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում մասնագիտացած փորձագետներ, մարդու իրավունքների պաշտպաններ, միջազգային իրավունքի մասնագետներ, քաղաքացիական հասարակության ինստիտուտների ներկայացուցիչներ եւ «Արեւմտյան Ադրբեջան»-ի (Բաքվի հակահայկական խոսույթն է՝ նկատի ունի ՀՀ ինքնիշխան տարածքը՝ խմբ.) իրենց հայրենակիցները»: Ըստ նույն տեղեկությունների, «մասնակիցներն ընդգծել են ՀՀ-ից արտաքսված հարյուր հազարավոր ադրբեջանցիների հիմնարար իրավունքների ճանաչումը, նրանց՝ իրենց պատմական հողեր (ամրագրում է ուղիղ տարածքային պահանջ՝ ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ - խմբ.) անվտանգ, կամավոր եւ արժանապատիվ վերադարձի իրավունքը միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում պահելու անհրաժեշտությունը»:

Բացի այդ, քննարկման ընթացքում պահանջ է դրվել հետաքննել, փաստաթղթավորել եւ իրավական գնահատական տալ, իրենց իսկ զառանցագին ձեւակերպմամբ, «Հայաստանում մնացած ադրբեջանցի ժողովրդին պատկանող մշակութային, կրոնական եւ պատմական ժառանգության, այդ թվում՝ տեղանունների, մզկիթների, գերեզմանատների, սրբավայրերի եւ այլ հուշարձանների ոչնչացման, պղծման եւ յուրացման համար»: Ի դեպ, ադրբեջանական ՁԼՄ-ները պնդում են, թե հանդիպմանը ներկա են գտնվել նաեւ Միացյալ Նահանգներում գործող հայկական լրատվամիջոցների, այդ թվում՝ Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի (ANCA) ներկայացուցիչները, որոնք միջոցառմանը հետեւել են լսարանից: Նշվում է նաեւ, որ քննարկման ընթացքում որեւէ միջադեպ չի գրանցվել: Միջոցառման ավարտին համաժողովի մասնակիցներն ընդունել են ԱՄՆ Կոնգրեսի անդամներին ուղղված հայտարարություն, որում ամրագրել են մի շարք պահանջներ, այսպես կոչված՝ «հարյուր հազարավոր ադրբեջանցիների՝ ՀՀ-ում բնակեցնելու հետ կապված», եւ կոչ են արել նպաստել այդ գործընթացին:

Ակնհայտ է, որ, չնայած ՀՀ գործող իշխանությունների չքմեղացումներին եւ ջղաձիգ հերքումներին, ավելի ստույգ ասած՝ հանցավոր լռությանը, Բաքուն շարունակում է համառորեն, համակարգված եւ կանոնավոր կերպով առաջ տանել «Արեւմտյան Ադրբեջան» արհեստածին, բայց վտանգավոր գաղափարախոսությունը՝ այն ավելի լրջացնելով եւ դարձնելով «միջազգային ուշադրության եւ իրավունքի առարկա»: Ցավալի է, բայց փաստ՝ հակահայկական թեզերը, պատմության նենգափոխումը, Հայաստանի նկատմամբ տարածքային պահանջները որքան էլ փաշինյանական ռեժիմը մոլեգին ժխտի, ժողովրդից թաքցնի իրական ճշմարտությունը, դարձել են Ադրբեջանի իշխանությունների քաղաքական առաջնահերթությունը: Եվ այս մասին հայաստանյան ընդդիմադիր եւ հայրենատեր ուժերի մտահոգություններն ու մտավախությունները բնավ մտացածին, քաղաքական դրսեւորումներ չեն, այլ համազգային հերթական աղետի ահազանգ, որին հայրենիքի ճակատագրով մտահոգ յուրաքանչյուր ոք պետք է ականջալուր լինի: Սա նոր ու վտանգավոր մարտահրավեր է, գոյաբանական նոր սպառնալիք, որի դեմ պետք է պայքարել ճիշտ այնպես, ինչպես թրքահպատակ իշխանություններին հեռացնելու համար:

Արա ԱԼՈՅԱՆ

ԿԱԼԱՆՔ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՉԻ ԵՂԵԼ ՆՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ, ՈՐ ԱՅՍ ԱՍՏԻՃԱՆ ԱՏԻ ԱՅԼԱԽՈՀՈՒԹՅՈՒՆԸ

Հասարակական-քաղաքական գործիչ Ավետիք Չալաբյանը երկու ամսով կալանավորվեց: Հունիսի 24-ին խուզարկվել էր Ա. Չալաբյանի բնակարանը, ոչինչ չէին հայտնաբերել, սակայն նրան ձերբակալել էին: Քննչական կոմիտեն հաղորդագրություն էր տարածել, որ Չալաբյանը, լինելով «Հայաքվե» միավորման համակարգող, «նպատակ է ունեցել խոչընդոտել 2026թ. հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններին քաղաքացիների ազատ ընտրական իրավունքի իրականացմանը»: Ըստ վարույթի՝ 2026 թ. մայիսին նա մեկնել է այլ երկիր եւ հանդիպումներ ունեցել այդ երկրի պաշտոնատար անձանց հետ՝ նրանց համոզելու եւ շահագրգռելու, որպեսզի նրանք իրենց պաշտոնեական լիազորություններն ու ազդեցությունն օգտագործեն՝ այդ նպատակին հասնելու համար: Խոսքը, բնականաբար, Ռուսաստանի մասին է: Մեղադրանքի համաձայն՝ ձեռք է բերվել համաձայնություն, այն է՝ «տվյալ երկրում տնտեսվարող կազմակերպությունների սեփականատերերի միջոցով ստիպել այդ կազմակերպություններում աշխատող, ընտրելու իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիներին, որպեսզի նրանք մեկնեն Հայաստան եւ ընտրությունների ժամանակ քվեարկեն «Ուժեղ Հայաստան» դաշինքի օգտին»: Հիշեցնենք, որ համացանցում տարածված ձայնագրության մեջ Ավետիք Չալաբյանը զրուցել է Հայաստանում Ռուսաստանի դեսպանատան աշխատակցի հետ՝ ընտրությունների թեմայով: Նկատենք նաեւ, որ արեւմտյան դեսպանատների աշխատակիցների հետ հանդիպող ոչ մի գործչի նկատմամբ նման մեղադրանքներ չեն առաջադրվել երբեւէ:

Չալաբյանի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 43-210-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ եւ 6-րդ կետերով (իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելու նախապատրաստություն): Թե իր որ իշխանական լիազորությունն է օգտագործել Չալաբյանը, հայտնի չէ: Բայց պատկերացնում ենք, թե ինչ աշխարհացունց բացահայտումներ կլինեին, եթե, օրինակ, արեւմտյան գործիչների հետ Նիկոլ Փաշինյանի կամ Արարատ Միրզոյանի զրույցները գաղտնալսվեին ու հրապարակվեին: Ակնհայտ է, որ իշխանություններն այս քայլով հերթական ընդդիմադիր գործչին են փորձում լռեցնել, վախի մթնոլորտ եւ լարվածություն տարածելով ընդդիմադիր շրջանակներում: «Հրապարակը» զրուցել է նախկին դատախազ, փաստաբան **Ռաֆֆի Ասլանյանի** հետ:

- Նիկոլ Փաշինյանը չի դադարում ընդդիմադիր ուժերի դեմ գործեր կարել, նա, խոստացածի համաձայն, փորձում է բոլոր այլախոհներին չեզոքացնել եւ ստեղծել է այնպիսի իրավիճակ, որ չգիտես, թե հաջորդ վայրկյանին ում կարող են կալանավորել: Անգամ ընտրական հաղթանակը Փաշինյանին չի հանդարտեցնում: Ի՞նչ պրոցեսներ են սրանք:

- Ես մշտապես եղել եմ այն կարծիքն, որ Նիկոլ Փաշինյանի վերարտադրության պարագայում ռեպրեսիաները լինելու են առավել սաստիկ: Նա ավելի շատ ընդդիմադիրների է ապօրինաբար բանտարկելու, օրեցօր նրանց շարքերն ընդլայնելու է: Կասկած չեմ ունեցել, որ այս մարդը շարունակելու է օրենքներ խախտել: Այս ամենը ես կապում եմ աթոռ ու պաշտոն պաշտելու իր էության հետ: Այս մարդն այդպիսին է, նա այդպիսին է ծնվել, այդպիսի գենետիկայով: Նա չի կարող համերաշխ մթնոլորտում ապրել, նա անդադար պետք է բախումներ հրահրի, պառակտի այս մի փոքր ազգին: Հայոց պատմության մեջ չի եղել նման մի ղեկավար, որ այս աստիճան ատի այլախոհությունը: Ցանկացած այլ կարծիք ունեցող մարդ այս մարդու համար անձնական թշնամի է: Այս ութ տարին բավարար էր՝ դա հասկանալու համար: Ցանկացած ընդդիմադիր ուժ իր ոխերիմ թշնամին է: Թող ոչ ոք չկարծի, թե այս անձը կարող է իր խառնվածքը փոխել, դառնալ համբերատար, ծանրակշիռ ու լուրջ քաղաքական գործիչ:

- Հրապարակում են կոնտեքստից կտրված ձայնագրություններ եւ տպավորություն են ստեղծում, որ այդ մարդիկ իսկապես հանցագործներ են: Բագրատ սրբազանի գործով էլ նման՝ կոնտեքստից կտրված ձայնագրություններ հրապարակեցին, սակայն մեկ տարում բոլոր մեղադրյալներն ազատ արձակվեցին, մեղադրանքը դատարանում փլվեց, պարզ դարձավ, որ գործ ունենք դասական զրպարտիչների հետ:

- Նիկոլ Փաշինյանն իրավաբան չէ, բայց գոնե իր կողքի իրավաբանները պետք է իրեն հուշեն, որ երբ ինքը խոսում է դատական պրոցեսների մասին, որոշում է՝ ով որքան պետք է դատապարտվի եւ այլն, առաջանում է իշխանությունների տարանջատման օրենքի խախտում: Վարչապետը չունի իրավունք՝ նման հայտարարություններ անելու: Քրեական դատավարությունում գործ ունենք ապացույցների բավարարության հետ, այսինքն՝ օբյեկտիվ իրականությունը եւ արդարադատության շահը կարող են տարբեր լինել, սակայն արդարադատության շահը մշտապես եղել է գերակա: Օբյեկտիվ իրականության մեջ գուցե շատերը համոզված են, որ ինչ-որ մի անձ կատարել է ինչ-որ մի արարք, սակայն պետք է ապացուցել, արդարադատական շահն ապացույցներ է պահանջում: Սրանք իրավական հարցեր են, որոնք Նիկոլ Փաշինյանին հասու չեն: Գոյություն ունի ապացույցների անթույլատրելիության ինստիտուտ, այսինքն՝ եթե ապացույցը պատշաճ ձեւով չի ձեռքբերվում, ի վերջո, արդարացվում է: Այս հանգամանքները՝ ապացուցման չափանիշները սահմանված են օրենսդրությամբ, վճռաբեկ դատարանի նախադեպային ակտերով, ներպետական օրենսդրությամբ գերակայություն ունեցող Եվրոպական կոնվենցիայով, ինչպես նաեւ՝ Եվրոպական դատարանի նախադեպային ակտերով: Այս մարդուն պետք է մեկը բացատրի, որ դատավորների վրա հարձակվելը, նրանց թելադրելն անթույլատրելի են:

Էջը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԵՎՐՈՊԱՑԻՆԵՐԻ ԱՅՑԵՐԸ ՄԻ ՆՊԱՏԱԿ ՈՒՆԵՆ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՆԿԱՐԾ ԻՐ ՈՒՂՈՒՑ ՉՇԵՂՎԻ

Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը պատրաստվում է հաջորդ շաբաթ այցելել Հայաստան: Այս մասին հայտնում է Politico-ն՝ հղում անելով իր աղբյուրներին: «ԵՄ պատվիրակությունը, որի կազմում կլինի նաեւ ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսը, կայցելի Հայաստան՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանին աջակցելու նպատակով՝ հունիսյան խորհրդարանական ընտրություններում հաղթանակից հետո: Հուլիսի 1-ին նախատեսված այցը, որի ծրագրերը դեռ վերջնականապես հաստատված չեն, տեղի կունենա այն պայմաններում, երբ Փաշինյանը ձգտում է ամրապնդել Հայաստանի հեռացումը Մոսկվայից եւ խորացնել կապերը Եվրամիության հետ՝ քվեարկությունից հետո, որը շատերը համարում են երկրի աշխարհաքաղաքական ապագայի վերաբերյալ հանրաքվե»,- գրում է լրատվամիջոցը: «Մենք տեսնում ենք, որ Հայաստանը Ռուսաստանի կողմից ուժեղ եւ մշտական ճնշման է ենթարկվում: Այս այցը նպատակ ունի հստակ ուղերձ հղել՝ Եվրոպան ձեզ հետ է»,- ասել է աղբյուրներից մեկը: Զրուցել ենք քաղաքագետ **Արմեն Բաղդասարյանի** հետ:

- Ուրսուլա ֆոն դեր Լայենը պատրաստվում է հաջորդ շաբաթ այցելել Հայաստան, դրանից առաջ էլ Հայաստան էր ժամանել ԵՄ ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսը, որին ՏԿԵ նախարար Խուդաթյանը մի քանի հատ ծիրան հյուրասիրեց, եւ հայտարարեցին, որ ծիրանի՝ ԵՄ արտահանման հարցը լուծված է: Ձեր կարծիքով, ինչ նպատակ ունեն եվրոպացի պաշտոնյաների՝ իրար հաջորդող այցերը:

- Այդ այցերը, անշուշտ, ունեն նպատակ: Նպատակն այն է, որ Հայաստանը հանկարծ իր ուղուց չշեղվի, օրինակ՝ Ռուսաստանին հանկարծ այլ բաներ չխոստանա: Բոլորս պետք է հասկանանք, որ այս այցերով ո՛չ ծիրանի արտահանման հարցն է լուծվում, ո՛չ էլ՝ ծաղիկների: Ազդեցությունների բաժանման հարց է սա իրականում, ինչն անվտանգության հետ կապված լուրջ խնդիրներով է հղի: Մի շուկան մյուսով փոխարինելով՝ ոչ մի էական հարց չի լուծվելու, դրանք անգամ երկրորդական հարցեր էլ չեն: Հայաստանի իշխանությունները ոչ թե ռուսական շուկային պետք է ապացուցեն, որ կարող են գտնել այլընտրանք, այլ պետք է երաշխիքներ գտնեն անվտանգության հետ կապված հարցերում, քանի որ ՌԴ-ից հնչող սպառնալիքները հենց այդ մասին են, իսկ Հայաստանի իշխանությունները, կարծես, չունեն որեւէ պատասխան եւ պատասխաններ հնչեցնելու փոխարեն ինչ-որ տղայական «դուխով» կեցվածք են ընդունել եւ հոխորտում են, սակայն պետք է հստակ այլընտրանք գտնել, հարաբերությունները կարգավորել ռուսական կողմի հետ: Գովազդային փուչիկները, ծիրանով նկարվելը եւ այլն, հավատացած եղեք, ոչ մի հարց չեն լուծում:

- Իսկ գյուղմթերքի, ծաղկի արտահանման հարցերը, Ձեր կարծիքով, ինչպե՞ս պետք է լուծվեն: Տեղեկություններ կան, որ հայկական ծաղիկները Եվրոպայում չեն գնում, ավելին՝ տեղեկություն կար, որ մի դեպքում դրանք պարտավորեցրել էին ոչնչացնել՝ ներկրողի միջոցներով, բայց իշխանությունները պնդում են, որ հայկական ապրանքը գնում է Եվրոպա, իսկ թե ինչ ճակատագրի է այն արժանանում այնտեղ, ոչ մեկն այդ մասին չի խոսում:

- Ընդամենը տասը րոպե է հարկավոր՝ հստակ պարզելու, թե եվրոպական շուկայում որքան արժեն ծաղիկը, բանջարեղենը եւ այլն: Հավատացնում եմ, որ ուղղակի կզարմանաք դրանց գներից, քանի որ դրանք այնտեղ շատ ավելի էժան են, քան Հայաստանում: Ինչ վերաբերում է հարցի մյուս կողմին, ապա այս իշխանությունները, ինչպես միշտ, ցանկանում են հասարակությանը զուտ մոլորեցնել: Ուզում են ցույց տալ, որ իրենք ամեն բան ճիշտ են անում, եւ մեղքը բարդել այլոց վրա: Դա այս իշխանության ձեռագիրն է: Էլի մեղքը ՌԴ-ի վրա կբարդեն եւ հակառուսական տրամադրություններն ավելի կխորացնեն: Իրականում, հասկանալի է, որ այստեղ կա մեկ կարեւոր խնդիր. հայ-ռուսական հարաբերությունները փչացրել են անդառնալիորեն: Առանց ՌԴ-ին արդարացնելու, ես կարող եմ պնդել, որ այդտեղ մեղքի իր ոչ փոքր մասն ունի հենց Հայաստանի իշխանությունը: Ռուսաստանն առաջնորդվում է իր շահերով, իսկ մեր իշխանությունն էլ պետք է իր շահերով առաջնորդվի, սակայն Փաշինյանը հայկական շահով առաջնորդվելու փոխարեն առաջնորդվում է Արեւմուտքի շահերով:

- Իսկ եթե իշխանություն փոխվի, հայ-ռուսական հարաբերությունները չե՞ն կարգավորվի, քանի որ նշում եք՝ հարաբերությունները վատացել են անդառնալիորեն:

- Շատ երկար ժամանակ կպահանջվի, մինչեւ այդ հարաբերությունները կարգավորվեն, իսկ հանրային գիտակցության մեջ փոփոխություն կատարելու համար ավելի շատ ժամանակ կպահանջվի. Արցախի կորուստ, երկար տարիների հետեւողական քարոզչություն, եւ դժվար թե ամիսների ընթացքում այս հարցը լուծվի: Ռուսաստանի համար եւս երկար ժամանակ կպահանջվի, որպեսզի Հայաստանի հանդեպ վստահությունը վերականգնի:

ՆԱԽԿԻՆ-ՆԵՐՆԵՐԿԱՆԵՐ, ՍԵՎԵՐ-ՍՊԻՏԱԿՆԵՐ, ՀԻՄԱ ԷԼ՝ ՕՐԳԱՆԻԿ ԵՎ ՈՉ ՕՐԳԱՆԻԿ ՔՎԵՆԵՐ

*«Հրապարակի» զրուցակիցն է մանկավարժ **Արամ Խաչատրյանը**:*

- Ընտրություններից առաջ մեր զրույցում ասել էիք. «Մեր ժողովրդին հարկավոր է ճիշտ ընտրություն կատարել՝ պատասխանենք վճռորոշ հարցի. շարունակել այն ճանապարհը, որով վերջին տարիներին շարժվել է երկիրը, թե ընտրել այլընտրանք»: Ժողովուրդը չընտրեց այլընտրանքը:

- Ես վստահ հայտարարում եմ՝ ժողովուրդն ընտրել է այլընտրանքը: Ժողովրդի մեծ մասն իր ձայնը տվեց ընդդիմադիր ուժերին: Տեղում չեմ եղել, չեմ նկատել աղաղակող ընտրախախտումները: Իսկ միջազգային եւ տեղի կազմակերպությունները, դիտորդական խմբերը: Բոլորի համար ակնառու է մի բան՝ անհնար է հավատ ընծայել այս ընտրությունների արդարացիությանն ու կայացմանը: ԿԸՀ-ի որոշումը գնահատվել է ոչ իրավաչափ եւ ժողովրդավարության սկզբունքներին հակասող, քանի որ մի շարք տեղամասերի արդյունքները չեղյալ համարելուն զուգահեռ՝ չսահմանելով կրկնակի ընտրություններ, ԿԸՀ-ն ոտնահարեց ՀՀ հազարավոր քաղաքացիների ընտրության իրավունքը եւ ԱԺ ձեւավորման մեջ նրանց դերակատարումը: Մինչդեռ ՔՊ ղեկավարը թարելու է Երեւան-Մեղրի, Երեւան-Վրաստան մայրուղիների անվտանգությունը: Ալիեւը հասկանում է, որ այդ բնակավայրերը գտնվում են ռազմավարական ճանապարհների վրա եւ ունեն մեծ նշանակություն: Պատկերավոր ասած՝ օձը փորձում է փաթաթվել զոհի պարանոցին՝ խեղդամահ անելու համար: Նրան օգնության է շտապում, ոչ ավել, ոչ պակաս՝ երկրի իշխանությունը: Մի կարեւոր փաստ էլ. կիպրոսցի Եխ պատգամավոր Գեադիս Գեադին Alpha News-ին տված հարցազրույցում հայտարարել է, որ Հայաստանում չեն հասկանում՝ Ադրբեջանն ու Թուրքիան ձգտում են ջնջել Հայաստանը երկրի երեսից: «Ես պարբերաբար լինում եմ Հայաստանում եւ տեսնում եմ, որ այսօր այնտեղ գերակշռում է չեզոք քաղաքականություն վարելու եւ Թուրքիայի ու Ադրբեջանի հետ համագործակցություն զարգացնելու ձգտումը՝ չհասկանալով, որ այդ երկրները ցանկանում են Հայաստանը ջնջել երկրի երեսից եւ ամբողջությամբ փոխել աշխարհի քարտեզը: Քանի որ մենք նույնպես եղել ենք թուրքական քաղաքականության զոհը, կարող ենք հասկանալ, թե նման գործընթացները հետագայում ինչի կարող են հանգեցնել»,- ընդգծել է պատգամավորը:

- Բայց բնակիչների մի զգալի զանգված չգիտակցեց, ավելին՝ անտեսեց գոյաբանական վտանգն ու նախընտրեց «հող հանձնողին»:

- Ցավալի է այդ մասին խոսելը: Եղան մարդիկ, բայց ամեն ինչ կորած չէ: Անօրեն իշխանություններին իշխանությունից զրկելուն միտված պայքարն ընթացքի մեջ է եւ կշարունակվի այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է՝ վերջնական նպատակին հասնելու համար:

- Ի՞նչն է Ձեր լավատեսության հիմքը: Վերջին ընտրողն իր «քվեն չէր գցել արկղի մեջ», Փաշինյանն իրեն հաղթող հռչակեց, իսկ երբ բողոքի ձայնը սկսեց նրան անհանգստացնել, «թիվ կրակեց», թե ՀՀ չափահաս քաղաքացիների կեսը «թաթախված է» կոռուպցիայի մեջ:

- Կասի, ուրիշ ինչ էիք մտածում: Նրա համար սահմաններ գոյություն չունեն: Ռուբիկոնը վաղուց է անցել, ժողովրդին խոստանում էր. «Ձեռքերս կկտրեմ, եթե ընտրախախտում անեմ»: Իսկ այժմ մեր գլխին գալիք աղետալի իրադարձություններն իրական են այն պարզ պատճառով, որ գործող իշխանությունները պարզապես գողացան ժողովրդի ձայնը եւ իրավունք ստացան վերստին հայտնվելու իշխանական բարձունքներում:

- Ի՞նչ նկատի ունեք՝ ասելով. «Մեր գլխին գալիք աղետալի իրադարձությունները...»:

- Փաշինյանի նախընտրական «խոստումներից» մի դրվագ հիշեցնեմ: Ամենուր խոսում էր 3 անկլավների հանձնման մասին, «ուշակորույս» նշում անունները՝ Բարխուդարլու, Խեյրիմլի, Տիգրանաշեն, որոնք, ըստ նրա, սահմանազատման գործընթացով կփոխանցվեն Բաքվին: Լսել եմ պատմաբան Խաչատուր Ստեփանյանի բացատրությունը՝ ԽՍՀՄ տարիներին հիշյալ անկլավներն անօրինականորեն միացվել են Ադրբեջանին, իսկ այսօր Հայաստանի լիարժեք մասն են կազմում: Դրանց փոխանցումը խոր թալանչիներ-թավիշոտ հեղափոխականներ», սեւեր-սպիտակներ, հիմա էլ՝ օրգանիկ եւ ոչ օրգանիկ քվեներ:

- Բռնազավթում, հետընտրական տեռոր. կհամախմբվի՞ ընդդիմությունը, եւ ինչ է սպասվում Նիկոլ Փաշինյանին:

- Նա 8 տարի երկիրը պահեց մի պարզ բանաձեւով. ինչ էլ լինի, ինքն այնտեղ չէ: Ինքը պատասխանատուն է, բայց մեղավոր չէ: Արցախը հանձնվեց՝ ինքը չէր: Արցախը հայաթափվեց՝ ինքը կապ չուներ: Պատերազմում պարտվեցինք՝ մեղավոր չէ: 2026 թ. ընտրությունների շեմին այդ «արվեստը» հասցրեց կատարելության: Կաշառք են բաժանում՝ ինքը չկա: Ծառուկյանը հարուստ է, Տաշիր Սամոն միլիարդատեր է, Քոչարյանը թալանչի է՝ բոլորը բաժանում են, ինքը՝ ոչ: Փողոցներն ընկած՝ այն ընդդիմադիրն էր ձեւանում, որ ձեթով վառած պեռաշկի է ուտում ու վրայից Ապարանի թան խմում:

- «Ուժեղ Հայաստան» կուսակցության առաջնորդի հայտարարությունը հույս ներշնչո՞ւմ է Ձեզ:

- Սամվել Կարապետյանը վերջապես հայտարարեց այն, ինչին մեր ժողովուրդը սպասում էր: Նա ասաց, որ վիճակն օրհասական է, կանգնած ենք Հայաստանի լինել-չլինելու խնդրի առջեւ, եւ անհրաժեշտ համարեց ընդդիմության լայն համախմբում՝ ընդդեմ չարիքի իշխանության: Նրա խոսքով՝ իշխանությունները պետք է հաշվի նստեն ոչ թե առանձին քաղաքական ուժերի, այլ հարյուր հազարավոր քաղաքացիների հետ: Նա նաեւ պնդել է, որ ընդդիմադիր դաշտի աջակիցների թիվը շարունակելու է աճել իշխանությունների քաղաքական ձախողումների հետեւանքով:

- Այդ կոչերը, համախմբման հավանականությունը չեն անհանգստացնում Փաշինյանին: Նա ավելի սանձարձակ հարձակումներ է անում ընդդիմադիր գործիչների նկատմամբ: Եվ դա իրականացվում է պետության կարեւորագույն հենասյուներից մեկի՝ ԱԱԾ-ի միջոցով:

- Ես կասեմ մի բան՝ որքան ձգձգվի Նիկոլի հեռացումը, վստահ եմ՝ այնքան դաժան է լինելու հենց իր համար: Չկա Նիկոլ՝ չկա նաեւ ՔՊ:

- Եթե նախկինում ընդդիմադիր Նիկոլն ասում էր, թե Սահմանադրությունը «կարված է մեկ մարդու հագով», ապա այսօր նա Սահմանադրությունը փորձելու է Ալիեւի՞ «հագով կարել»:

- Էդպես է, որ կա: Ահա թե ինչու գլխավոր հարցը մանդատ վերցնելը չէ: Իմ կոչն ընդդիմադիր քաղաքական դաշտին հետեւյալն է՝ դուրս բերել նվիրյալներին արհեստական եւ ոչ էական օրակարգերից, չմտածել, թե ով ինչ հուզիչ գնահատական կտա, քանի որ դրանք թիթեռի կյանք ունեն, եւ ստանձնել քաղաքական պատասխանատվություն՝ թույլ չտալու, որ շարունակվի անօրեն իշխանության գոյությունը: Հայկական առակով խոսեմ: Մի մարդ անցնելիս տեսնում է մեկին, որը գլուխը բռնած՝ հարայ է կանչում: Հարցնում է՝ ինչ է եղել: Պատասխանում է՝ վառվում եմ: Ինչպե՞ս պատահեց: Ես՝ ինքս արեցի: Մարդն օգնություն չի ցուցաբերում՝ ասելով. եթե դու ես քո գլուխը վառել, ինքդ էլ քեզ փրկիր: Կարծես ամեն ինչ ասացի: Չարիքի կապանքներից մենք ենք մեզ փրկելու:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

«ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԱԼՍ»՝ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՆՈՍՏԱԼԳԻԱ

1979 թվականի հունվարին սովետական էկրաններին հայտնվեց «Դպրոցական վալս» կինոնկարը: Սովետական իրականության համար դա կարելի էր ֆուրոր համարել: Սկսվեցին քննարկումներ: Ռեժիսոր Պավել Լյուբիմովի կինոնկարը խիզախ մարտահրավեր էր, որտեղ ներկայացված էր սովետական պատանին՝ իր հասունացմամբ, պատասխանատվության գիտակցման ձեւավորմամբ ու սիրո ճաշակումներով: Սովետական այն ժամանակվա պատանեկան-դպրոցական կինոն հիմնականում ընկերության, ուսման կարեւորության եւ բարոյական դաստիարակության մասին էր: Իսկ Լյուբիմովն առաջ էր անցել ու կինոյի լեզվով խոսում էր դպրոցականների հույզերից, սիրուց: Խոսում էր այն ամենից, ինչը սովորաբար մնում էր կադրից դուրս՝ սեր, սիրահարություն, վաղ հղիություն, բարոյական ընտրություն, անձնական պատասխանատվություն:

Ավագ դպրոցականներ Գոշան ու Զոսյան սիրում են իրար: Սակայն Զոսյայի վաղ հղիության մասին լուրը դառնում է փորձություն երկուսի համար էլ: Աղջիկը, պարզվում է, պատրաստ է ընդունել իր կատարած ընտրության հետեւանքները: Տղան՝ ոչ: Գոշան ի վիճակի չէ ստանձնել պատասխանատվություն եւ թողնում է Զոսյային մենակ՝ կյանքի սպասվելիք դժվարություններին դեմ-հանդիման: Աղջիկն էլ ստանձնում է պատասխանատվություն ու փորձում դասավորել իր կյանքը՝ անկախ ամեն ինչից: Ըստ էության, մելոդրամատիկ սյուժե: Սակայն հեղինակները որոշել են «խորամանկել» ու հերոսների զատորոշում՝ «լավերի» ու «վատերի», հստակ չեն արել: Գոշան ակնհայտ չարագործ չէ, Զոսյային էլ՝ իդեալականացված գլխավոր հերոսուհի չի կարելի համարել: Նրանց արարքներն արդյունքն են նրանց տարիքի եւ աղքատիկ կենսափորձի, հավակնությունների եւ սեփական որոշումների հետեւանքները կանխատեսելու անկարողության: Հենց սա է, որ նույնիսկ այսօր այս կինոնկարը դարձնում է դիտարժան: Ֆիլմում նկարահանվել են Ելենա Ցիպլակովան, Սերգեյ Նասիբովը, Յուրի Սոլոմինը, Նատալյա Վիլկինան, Եվգենյա Սիմոնովան, Նինա Մենշիկովան, Վիկտոր Պրոսկուրինը եւ այլք:

Գեղարվեստական առումով «Դպրոցական վալսը» շարունակում է երիտասարդության մասին սովետական կինոյում սկսված ակտիվ քննարկման ավանդույթը, որի հիմքը դրվել էր «Իսկ գուցե սա սեր է» կինոնկարով: «Դպրոցական վալսում» ըստ էության ֆիքսվեց, որ հասունացումն անհնար է առանց սխալների, իսկ բարոյական ընտրությունը չի կարելի փոխարինել պատրաստի գաղափարախոսական սխեմաներով ու մեխանիզմներով: Ի դեպ, կինոնկարն ի սկզբանե բավական բարդ ճակատագիր է ունեցել: Դպրոցական աղջկա հղիանալու թեման սովետական իրականությունում չափազանց ռիսկային էր համարվում, եւ գրաքննության մկրատը մեկ անգամ չէ, որ միջամտել է՝ սցենարից մինչեւ վերջնական արտադրանք ու մոնտաժ: Որոշ բաներ փոփոխվել են, մեղմացվել: Սակայն նույնիսկ նման «հղկված» վիճակում՝ կինոնկարը շարունակել է պահպանել թեմատիկ սրությունը եւ առաջացրել հանրային լայն արձագանք: Այսօր արդեն «Դպրոցական վալսն» ընկալվում է որպես առաջին սիրո մասին երիտասարդական դրամա, որտեղ քննարկվում են նաեւ անձի հասունացումը, ազատության գինն ու արարքների հանդեպ պատասխանատվության անխուսափելիությունը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԻՐԵՆՔ ԷԼ ԻՐԵՆՑ ԱՐԱԾ ԳՈՐԾԻՑ ՉԵՆ ՀԱՍԿԱՆՈՒՄ

Հայաստանի բոլոր դպրոցների 9-րդ դասարանի սովորողները հունիսի 24-ին «Գրականություն» եւ «Հայաստանի պատմություն» առարկաների ավարտական քննությունը հանձնեցին էսսեի ձեւաչափով՝ երկու առարկաների բովանդակությունն

ինտեգրող գրավոր աշխատանքի միջոցով, որը բխում է հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված կարողունակությունների ձեւավորման պահանջից: Այս տարվա էսսեի քննության թեման էր. Պատմական հատվածը. «Երկրի տնտեսական վիճակն ինչպե՞ս է ազդում մարդկային փոխհարաբերությունների վրա: Ըստ քեզ՝ այսօր ինչպիսի՞ արժեքների վրա են կառուցվում մարդկային փոխհարաբերությունները, եւ ո՞րն է քեզ համար առաջնայինը»: Գրական հատվածը. Ստ. Զորյանի «Մի կյանքի պատմություն»: Այս երկու թեմաներն աշակերտները պետք է համադրեին, միաձուլեին, ինչը, ըստ ուսուցիչների, այնքան էլ չի ստացվել: Երեխաները հիմնականում անդրադարձել են Զորյանի գրական գործին եւ նման փիլիսոփայական վերլուծություններ՝ Զորյանի գործի պրիզմայով մարդկային փոխհարաբերությունների եւ արժեքային համակարգի ու տնտեսության հետ կապը չեն կարողացել ներկայացնել:

Կազմակերպված վեբինար-հարցուպատասխանի ժամանակ, դեռ այս տարվա մարտին, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանն ասել էր, որ «Գրականություն» եւ «Հայաստանի պատմություն» առարկաների ավարտական քննությունն այս տարի արդեն կազմակերպվելու է նոր միասնական ձեւաչափով: «Սովորողները ստանալու են երկու տեքստ՝ գրական որեւէ ստեղծագործության եւ պատմական որեւէ դրվագի, իրադարձության վերաբերյալ, պետք է այդ տեքստերին ծանոթանալուց հետո տրված ժամանահատվածում գրեն էսսե՝ փորձելով իրենց մտքերն արտահայտել երկու տեքստի վերաբերյալ, դրանց միջեւ գտնել կապեր, դրսեւորել իրենց վերաբերմունքը, ստեղծագործականությունը, քննադատական մտածողությունը: Էսսեն ավելի ազատ ձեւաչափով սովորողին իր մտքերը շարադրելու հնարավորություն է ընձեռելու»,- ասել էր նա:

Դեռ անցած տարի հայտնի էր, որ քննությունն անցնելու է բավականին տարօրինակ ձեւաչափով, օրինակ՝ էսսեում ուղղագրական սխալները հաշվի չեն առնվելու: Նշում էին, որ կարեւորն այն է, որ միտքը գեղեցիկ լինի, պատմական եւ գրական ժանրերը ճիշտ համադրված լինեն, ո՛չ ուղղագրական, ո՛չ կետադրական սխալները հաշվի չեն առնվելու: Այն ժամանակ այս տեղեկատվությունը մեծ արձագանքի արժանացավ՝ մանկավարժները դեմ էին այս մոտեցմանը:

Կրթության փորձագետ **Ատոմ Մխիթարյանը**, մեզ հետ զրույցում խոսելով այս մասին, ասաց. «Պետք է հասկանալ՝ արդյոք ուսուցիչները դրան պատրաստ են, թե՞ ոչ: Այդ փորձարկումը նախարարությունն իրականացրեց Տավուշի մարզում: Ուսուցիչներ եղան, ովքեր բողոքեցին, որ իրենց համար էլ է դժվար այդ ամբողջը կազմակերպել, հասկանալ, բայց նախարարությունը հաշվի չառավ այդ ամենը: Ո՛չ չափանիշ կա, ո՛չ չափորոշիչ կա, ո՛չ սկզբունք կա»:

Ուղղագրական սխալները հաշվի չառնելու մասին հարցին Մխիթարյանը պատասխանեց. «Միտքը շատ սուբյեկտիվ է գնահատել՝ մեկը կարող է շատ բարձր գնահատել, մեկը՝ շատ ցածր, իրենք էլ իրենց արած գործից չեն հասկանում»:

Զրուցեցինք 9-րդ դասարանի գրականության ուսուցչուհի Դավթյանի հետ: «Ես ողջունում եմ դարի նորարարությունը, բայց փորձարկել Տավուշում՝ նոր դպրոց մտցնել, համաձայն չեմ այդքան էլ, որ 9-րդ դասարանցիները գրեին»: Ինչքանո՞վ էր ձեզ՝ ուսուցիչներիդ համար դժվար այս քննությունը: «Ոչ թե դժվար էր, այլ շատ դժվար էր»: Ի՞նչ սկզբունքով եք գնահատել, օրինակ՝ սիմպատիա եք ունեցել որեւէ աշակերտի նկատմամբ՝ բարձր եք գնահատե՞լ, ի՞նչ չափորոշիչով եք, առհասարակ, առաջնորդվել: «Քննության ժամանակ այդ էմոցիաներին, զգացմունքներին տրվելու պահը չենք ապահովում, մենք իրենց դիտարկում ենք որպես 9-րդ դասարանցիներ: Ուղղագրական սխալների վրա, իհարկե, աչք չենք փակում, ինչ-որ տեղ դա չենք անտեսում, բայց միավորների այդպես կորուստ էլ չի լինում»:

Դավթյանը նշեց նաեւ, որ երեխաներն ինքնուրույն, «գլխիկոր» աշխատել են: «Մեր դպրոցը եզակի դպրոցներից էր, որ իմ եւ պատմության ուսուցչի նախաձեռնությամբ, յուրաքանչյուր երկուշաբթի օր երկուսուկես ժամ երեխաներին տալիս էինք գրավորի այդ տեսակը, մենք դրանով հաջողեցինք»,- կարծում է գրականության ուսուցչուհին:

Զրուցեցինք նաեւ քննություն հանձնած 9-րդ դասարանցի Նատալիի հետ: Հետաքրքրվեցինք՝ հե՞շտ էր արդյոք քննությունը, ինչքանո՞վ էին պատրաստված, քննության ժամանակ ի՞նչ խնդիրների բախվեցին աշակերտները: Աշակերտուհին ասաց, որ քննությունը, ընդհանուր առմամբ, միջին բարդության էր, բայց էսսեն պահանջում էր լավ մտածել եւ ճիշտ ձեւակերպել մտքերը: «Հնարավորինս լավ էի պատրաստվել, հիմնական դժվարությունը մտքերը ճիշտ դասավորելն ու թեմային համապատասխան օրինակներ ընտրելն էր»: Էսսեից ստացած գնահատականը կանդրադառնա՞ ձեր մյուս գնահատականների վրա: «Կարծում եմ՝ էսսեն կարող է դրական ազդեցություն ունենալ գնահատականիս վրա, քանի որ փորձել եմ հնարավորինս լավ արտահայտել մտքերս ու կարծիքս»,- ասաց Նատալին:

Շուշան ՍԱՐԻԿՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 26.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՆՉՈ՞Ւ ՉԻ ԳՈՐԾՈՒՄ ԻՋԵՎԱՆԻ ԼՈՂԱՎԱԶԱՆԸ

«Հրապարակն» Իջեւանից նամակ էր ստացել. «Հարգելի խմբագրություն, խնդրում եմ անդրադառնանք Իջեւան քաղաքին: Ընտրություններից առաջ մեծ շուքով համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանը քաղաքային զբոսայգում լճի բացումն արեց՝ կատարված մեծ գործերից էր: Այդ լողավազանի համար հարյուր միլիոններ են ծախսել՝ ֆիլտրացիոն համակարգեր տեղադրել ու չեն կարողանում մաքուր պահել: Երեխաները երեք օր են կարողացել լողանալ: Կեղտի մեջ կորած է արդեն, այժմ միայն գորտեր կարելի է բազմացնել՝ այնքան է կեղտի մեջ կորել: Ընտրություններն անցան, ու պրծանք: Մի երեխա չի լողացել այդ լճում»: Հետո տեղեկացանք, որ լճակն արդեն դատարկել են՝ ընտրություններն ավարտվել են, եւ փիառի կարիք արդեն չկա:

Այս նամակի հետքերով հունիսի 23-ին այցելեցինք Իջեւան քաղաք: Եղանք քաղաքի կենտրոնական զբոսայգում, որտեղ կառուցվել է լողավազանը: Իջեւանը գեղեցիկ քաղաք է, հատկապես սիրուն են Աղստեւի առափնյա տարածքը, կենտրոնական զբոսայգին, որտեղ խորհրդային տարիներին քանդակագործների սիմպոզիումներ էին անցկացվում, որի ընթացքում արարված քանդակները տեղադրված են այգում: Լողավազանն ավելի է գեղեցկացնում զբոսայգին: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը պարբերաբար հայտարարում է, թե «հատիկ առ հատիկ» ինչ անշարժ գույքեր, հողատարածքներ են վերադարձվել պետությանը եւ համայնքներին: Հանրությունը շատ դեպքերում չի իմանում, թե ինչ եղան այդ «վերադարձված» հողամասերը, անշարժ գույքերը, դրանք որքանով են ծառայում պետական եւ հանրային շահերին:

Իջեւանի քաղաքային զբոսայգում, լողավազանին կից գտնվող Իջեւան համայնքին վերադարձված տարածքներն իսկապես կարող են ծառայել հասարակությանը, մանուկներին: Բայց լողավազանը դատարկ էր մեր այցելության պահին, մի բանվոր էր աշխատում, բահով հարթեցնում էր լողավազանին կից հողե թեքությունը: Լողավազանի հարակից գոտու դիտահորի կափարիչը բաց էր, երեւում էին ջրի պլաստմասսե բազում խողովակներ: Համայնքապետարան այցելելով՝ Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանին հարցրինք լողավազանի հետ կապված ծրագրի մասին: Ճաղարյանը հայտնեց, որ լողավազանի գործարկումն իրականացվել է սուբվենցիոն ծրագրի շրջանակներում, որի նախահաշիվը կազմել է 122 միլիոն դրամ: Կապալառու կազմակերպությունը՝ «Արտկրեստ գլոբալ» ՍՊԸ-ն (տնօրեն՝ Արթուր Բաբաջանյան), մրցույթը շահել է 116 միլիոն դրամով, այդ գումարից 46 միլիոն դրամը՝ պետբյուջեի, 70 միլիոնը Իջեւան համայնքի ներդրումն է: Ծրագրի մեկնարկը եղել է 2025թ. ապրիլի 17-ին, ավարտը նախատեսված է այս տարվա օգոստոսին: Այսինքն՝ ծրագիրը կիսատ է: Իսկ թե ինչու են անավարտ լողավազանը բացել, պարզ է՝ նախընտրական քարոզչության նպատակով:

Համայնքի ղեկավարն ասաց, որ մեկ ամիս առաջ լողավազանը ջրով լցրել են, փորձարկում են արել, սակայն լճակի ֆիլտրացիոն համակարգը վատ է աշխատել, լողավազանը կեղտոտվել է: Դրանից հետո լճակը դատարկել են: 1000 մ3 տարողությամբ ջրամբարը նորից են լցնելու խմելու ջրով, ջուրը մաքուր պահելու համար համապատասխան նյութեր են խառնելու: Ա. Ճաղարյանն ասաց, որ լողավազանն ամենախոր տեղում 1,4 մ է, իսկ ամենածանծաղ տեղում՝ 0,9 մ խորություն ունի: Արդեն ընտրվել է 4 փրկարար, ովքեր լողավազանում աշխատելու են, հերթապահություն են իրականացնելու: Ուզում են լողավազանը շահագործման հանձնել օգոստոսի սկզբին, որպեսզի իջեւանցի երեխաներն այս ամառ կարողանան վայելել գեղեցիկ, կապույտ ներկված լողավազանը եւ ամռան տապին լողանալ իրենց քաղաքում:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am